Funded by the European Union

EU4Climate

Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Republic of Moldova, Ukraine

UNDP

ԱՍԳ-ների նախապատրաստումը և ներդրումը ԱԼԳ երկրներում

Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում առաջին և արդիականացված ԱՍԳ-ների համեմատական վերլուծություն.

Տեխնիկական փաստաթուղթ
Նոյեմբեր 2021

Այս փաստաթուղթը պատրաստվել է «ԵՄ կլիմայի համար» ՄԱԶԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի ներքո, CRIS ENI/2017/387-538.

Հաշվետվության ամսաթիվ՝ 11 հոկտեմբերի 2021թ.

Մշակողներ՝ Էլիզաբեթ Քեմփել և Օլգա Կուցուկակե

Այս փաստաթուղթը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Այս հրապարակման բովանդակությունը բացառապես հեղինակի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտացոլի Եվրամիության կամ ՄԱԶԾ-ի կարծիքը:

Բովանդակություն

1. «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի անդրադարձ 5

ԱՍԳ-ների ուղղությամբ աջակցություն «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի կողմից 7

2. Հաշվետվողական պարտավորություններ ՄԱԿ ԿՓՇԿ-ի նկատմամբ 9

3. Երկրի բնութագրերը 10

3.1. Հիմնական ցուցանիշներ 10

3.2. ՋԳ արտանետումների պատմական միտումներ 14

4. Ազգային մակարդակով սահմանված գործողություններ/ներդրումներ 17

4.1. Հիմնական տեղեկություններ ԱՍՆԳ-ների և արդիականացված ԱՍԳ-ների վերաբերյալ 17

4.2. Երկրի թիրախները արդիականացված ԱՍԳ-ներում 22

4.3. ԱՍԳ-ների նախապատրաստում 23

4.3.1. Հայաստան 23

4.3.2. Բելառուս 24

4.3.3. Վրաստան 25

4.3.4. Մոլդովա 26

4.3.5. Ուկրաինա 28

4.4. ԱՍԳ-ների իրագործում 29

4.4.1. Հայաստան 29

4.4.2. Ադրբեջան 29

4.4.3. Բելառուս 30

4.4.4. Վրաստան 31

4.4.5. Մոլդովա 32

4.4.6. Ուկրաինա 32

4.5. Քաղված դասեր և լավագույն փորձի օրինակներ 33

4.5.1. Հայաստան 33

4.5.2. Ադրբեջան 34

4.5.3. Բելառուս 35

4.5.4. Վրաստան 36

4.5.5. Մոլդովա 37

4.5.6. Ուկրաինա 37

5. Հավելվածներ 38

5.1. Հայաստանի գործնական ուսումնասիրություն. կլիմայական քաղաքականության և ծախսերի վերանայում 38

Հապավումների ցանկ

ԵԹԶ	Երկամյա թափանցիկության զեկույց
ԵԱԶ	Երկամյա առաջընթացի զեկույց
ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
CMA	Կողմերի համաժողով, որը ծառայում է որպես Փարիզի համաձայնագրի կողմերի ժողով
ԳՀ	Կողմերի համաժողով
CPEIR	Կլիմայի քաղաքականության և ծախսերի վերանայում
CRF, ՀԸՁ	Հաշվետվությունների ընդհանուր ձևաչափ
CTF, ԱԸՁ	Աղյուսակային ընդհանուր ձևաչափ
ԸԹԾ	Ընդլայնված թափանցիկության շրջանակ ՋԳ ջերմոցային գազ
ԿՓՄՀ	Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական հանձնաժողով
ՁԸՈՒ-եր	Ձևաչափեր, Ընթացակարգեր և Ուղեցույցներ
ՉՀՀ	Չափում, հաշվետվայնություն և հավաստագրում
ԱՀ	Ազգային հաղորդակցություն
ԱՍԳ- ներ	Ազգային մակարդակով սահմանված գործողություններ/ներդրումներ
ԱԿՓ	Ազգային կադաստրի հաշվետվություն
ՓՀ	Փարիզի համաձայնագիր
ՄԱԿ ԿՓԾԿ	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա

1. «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի անդրադարձ

«ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագիրն օժանդակություն է ցուցաբերում Արևելյան գործընկերության վեց երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի կառավարություններին՝ կլիմայի փոփոխության դեմ գործողություններ ձեռնարկելու ուղղությամբ: Այն աջակցում է երկրներին՝ Կլիմայի մասին Փարիզի համաձայնագրի իրագործման և կլիմայի քաղաքականության և օրենսդրության բարելավման ուղղությամբ՝ նպատակ ունենալով սահմանափակել կլիմայի փոփոխության ազդեցությունը հասարակության կյանքի վրա և մեծացնել այդ փոփոխության նկատմամբ դիմակայությունը:

«ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 8,8 միլիոն եվրո և այն ֆինանսավորվում է Եվրոպական միության (ԵՄ) կողմից՝ 8 միլիոն եվրոյի չափով: Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) իրականացնող մարմինն է և աջակցում է ծրագրին 0,8 միլիոն եվրոյի չափով: Վեց շահառու երկրներից յուրաքանչյուրում նշանակվել են ազգային լիազորված մարմիններ, որոնք համակարգում են ազգային գործողությունները և ապահովում տարածաշրջանային համագործակցությունը: Ծրագիրը մեկնարկել է 2018թ. դեկտեմբերին և շարունակվելու է մինչև 2022թ. (47 ամիս տևողությամբ):

Աջակցելով Արևելյան գործընկերության երկրներին ցածր արտանետումներով և կլիմայի հանդեպ դիմակայուն զարգացմանը նպաստող կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման և Փարիզի համաձայնագրի ներք ստանձնած հանձնառությունների իրականացման ուղղությամբ, Ծրագիրը սահմանում է դրա համար անհրաժեշտ հիմնական գործողությունները և արդյունքները: Դրանք ոչ միայն համահունչ են Փարիզի համաձայնագրին, այլ նաև ուղղված են նպաստելու Եվրոպական Կանաչ գործարքի, Արևելյան գործընկերության 2020-ից ի վեր առաջնահերթությունների[1], Ասոցիացման համաձայնագրերի և Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA), ինչպես նաև մինչև 2030թ. Կայուն զարգացման օրակարգով սահմանված գլոբալ քաղաքականության հիմնական նպատակների իրագործմանը: Ծրագիրը նաև կվերածվի գործողությունների առաջնահերթությունների, որոնք ուրվագծված են 2021թ. հունիսին Արևելյան գործընկերության Շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության հարցերով նախարարական հանդիպման արդյունքներով կազմված Նախագահության եզրակացություններում:

Այս ծրագրի նպատակներն իրագործելու համար պետք է ձեռք բերվեն հետևյալ արդյունքները.

[1] https://eeas.europa.eu/sites/default/files/swd_2021_186_f1_joint_staff_working_paper_en_v2_p1_1356457_0.pdf

- Վերջնական կամ արդիականացված՝ Ազգային մակարդակով սահմանված ներդրումների ներկայացում ՄԱԿ ԿՓՇԿ-ին.
- Փարիզյան համաձայնագրի և համապատասխան ազգային հանձնառությունների քաղաքական և տեխնիկական մակարդակով միջգերատեսչական իրազեկման և համակարգման բարելավում.
- Մինչև դարակես ցածր արտանետումներով զարգացման ռազմավարությունների (ՑԱԶՌ, LEDS) մշակում.
- ՉՀՀ համակարգերի ձևավորում կամ հզորացում, որպեսզի երկրները կարողանան համապատասխանություն ապահովել Փարիզի համաձայնագրի թափանցիկության պահանջներին.
- Ընդլայնված ներդաշնակեցում ԵՄ կլիմայական օրենսդրության հետ, ինչպես նախատեսված է ԵՄ-ի հետ երկկողմ համաձայնագրերով, ինչպես նաև կլիմայական հարցերի վերաբերյալ Էներգետիկ համայնքի պայմանագրի համատեքստով, որոնք չեն ընդգրկված EU4Energy ծրագրի շրջանակում.
- Արևելյան գործընկերներից յուրաքանչյուրի համար Փարիզի համաձայնագրի իրագործման կոնկրետ ոլորտային ուղեցույցների սահմանում.
- Կլիմայի ուղղությամբ ֆինանսական ռեսուրսների հավաքագրման ընդլայնում.
- Ընդլայնված հարմարվողականության պլանավորում:

Գծապատկեր 1. «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի ակնկալվող արդյունքները

Քանի որ ձեռք բերվելիք արդյունքները սերտորեն փոխկապակցված են, զուգահեռաբար տարվում են աշխատանքներ տարբեր ուղղություններով, ընդ որում հաշվի են առնվում կոնկրետ առանձին ազգային հանգամանքները: Կլիմայի փոփոխության դեմ պայքարը պահանջում է ջերմոցային գազերի կադաստրի համընդգրկուն համակարգերի առկայություն, գործունակ և ծախսարդյունավետ միջոցառումների բացահայտում, կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների սահմանում, հարմարվողականության գործողություններ, գործողությունների ինտեգրում քաղաքականության բոլոր ոլորտներում և օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի մշակում՝ սահմանված նպատակներն իրականացնելու համար: Բնականաբար, երկրներն արդեն աշխատել են այս խնդիրների ուղղությամբ մինչ «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագիրը, հետևաբար փաստացի կարիքները գտնվում են տարբեր մակարդակներում, սակայն սա հնարավորություն կընձեռի երկրների միջև իրականացնել գիտելիքների և լավագույն փորձի փոխանակում: Նման փորձի փոխանակումն ապահովվում է կանոնավոր տարածաշրջանային սեմինարների և միջոցառումների միջոցով, որոնց ակտիվորեն մասնակցում են նաև փորձագետներ այլ երկրներից և միջազգային կառույցներից:

ԱՍԳ-ների ուղղությամբ աջակցություն «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի կողմից

«ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագիրն օժանդակել է Հայաստանին, Բելառուսին, Մոլդովային և Ադրբեջանին՝ իրենց արդիականացված ԱՍԳ-ները պատրաստելու ուղղությամբ, ընդ որում Ադրբեջանի ԱՍԳ-ն գտնվում է ազգային մակարդակով լրացուցիչ քննարկումների փուլում, և երկրի արդիականացված ԱՍԳ -ն չի հաջողվել ներկայացնել մինչև COP26-ը (Կողմերի 26-րդ համաժողով):

Վրաստանում և Ուկրաինայում «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագիրը օժանդակություն է ցուցաբերել իրազեկվածության բարձրացման և ԱՍԳ-ի վերանայված թիրախների ներկայացման ուղղությամբ: Վրաստանում անցկացվել է Կլիմայի ընկալման և վարքագծային վերլուծության վերաբերյալ ազգային հետազոտություն՝ 1100 մասնակիցների շրջանում, հարցազրույցի միջոցով, որի արդյունքում արձանագրվել է կլիմայի փոփոխության հետևանքների վերաբերյալ վրաստանցիների իրազեկվածության էականորեն բարձր մակարդակը: Ուկրաինայում ԱՍԳ-ի վերաբերյալ իրականացվել են իրազեկվածության բարձրացման մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ ԱՍԳ-ի նպատակների ներկայացում լրագրողական համայնքի համար: Հետագայում կշարունակվի աջակցության տրամադրումն Ուկրաինայում ԱՍԳ-ի իրականացման ճանապարհային քարտեզի, իսկ Վրաստանում, Հայաստանում և Մոլդովայում՝ ֆինանսական ծրագրի մշակման ուղղությամբ: Սույն հաշվետվության Հավելվածում ներկայացված են չորս երկրների կոնկրետ դեպքերի ուսումնասիրություններ, որոնք ներկայացնում են Մոլդովայում և Ուկրաինայում հիմնական ներկառուցողական

գործողությունները, Վրաստանի կլիմայի վերաբերյալ իրազեկվածության մասին հետազոտությունը և Հայաստանում իրականացված կլիմայական բյուջեի վերանայումը:

ԱՍԳ-ի պատրաստման և իրականացման ընթացքում երկրների կողմից ձեռք բերված լավագույն փորձը նկարագրված է 4.5 բաժնում: «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի միջոցով հրավիրված ազգային և միջազգային փորձագետների կողմից տրամադրված աջակցությունը ներառում էր հետևյալ գործողությունները:

- Հաղորդակցություն կառավարության և այլ առանցքային շահագրգիռ կողմերի հետ
- Որպես հիմնարար փաստաթուղթ հանդիսացող՝ ՋԳ կադաստրի վերանայում և աջակցություն անհրաժեշտ բարելավումների ուղղությամբ
- Կլիմայի համապատասխան քաղաքականության բացահայտում և ընտրություն՝ ազգային ռազմավարությունների և օրենսդրության վերանայման միջոցով
- Ոլորտային քաղաքականության վերլուծության ուղեցույց
- Արտանետումների սցենարների սահմանում և հաշվարկ
- Արտանետումների սցենարների համար օգտագործվող մեթոդոլոգիական ուղեցույց
- Առաջարկություններ հարմարվողականության խնդիրների ինտեգրման համար
- Ֆինանսական ազդեցության վերլուծություն
- Ցուցանիշների ընտրություն
- Լավագույն փորձի օրինակների փոխանակում
- Հաշվարկների և ԱՍԳ-ների նախագծերի վերանայում
- Գենդերային հավասարության և խոցելի խմբերի նկատառումների գնահատման ուղեցույց
- ԱՍԳ-ի իրականացման ճանապարհային քարտեզների մշակում
- 4/CMA.1 որոշմամբ սահմանված պահանջների հետ համապատասխանության ստուգում
- Առաջարկություններ ԱՍԳ-ի հետագա արդիականացման աշխատանքների և առաջընթացի արձանագրման վերաբերյալ
- Կոնկրետ երկրների կարիքներից ելնող աջակցություն, ըստ անհրաժեշտության

2. Հաշվետվողական պարտավորություններ ՄԱԿ ԿՓՇԿ-ի նկատմամբ

«ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի բոլոր շահառու երկրները հանդիսանում են ՄԱԿ ԿՓՇԿ կողմեր: Բելառուսը և Ուկրաինան հանդիսանում են Հավելված I-ի անդամ երկրներ, իսկ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը և Մոլդովան՝ Հավելված I-ում չընդգրկված երկրներ: Համաձայն Կոնվենցիայի և նրա որոշումների, դա հանգեցնում է կողմերից ակնկալվող հաշվետվայնության տարբեր պարտավորությունների: Աղյուսակ 1-ում ներկայացված է Ազգային հաղորդագրության (ԱՀ) և երկամյա (առաջընթացի) զեկույցների (ԵԶ/ԵԱԶ) գծով ներկայացվող հաշվետվությունների/զեկույցների կարգավիճակը յուրաքանչյուր երկրի համար:

Աղյուսակ 1. ՄԱԿ ԿՓՇԿ-ին ներկայացվող հաշվետվությունների ամփոփագիր

Երկիր	Խումբն ըստ Հավել-ված I-ի	ԱՀ		ԵԱԶ/ԵԶ		ՋԳ կադաստր		Օգտագործ-ված ԳՏՆ (GWP)
Հայաստան	չներառված	ԱՀ4	17.05. 2020	ԵԱԶ3	17.05. 2021	ԱԿՀ (1990–2017)	17.05. 2021	ԳՏՆ-2-րդ ՏՀ
Ադրբեջան	չներառված	ԱՀ4	23.06. 2021	ԵԱԶ2	26.09. 2018	Պաշարներ 1990–2017թթ.		ԳՏՆ-2-րդ ՏՀ
Բելառուս	անդամ	ԱՀ7	03.09 2019	ԵԶ4	27.01. 2020	ԱԿՀ + ԸՀՁ (1990–2019)	14.04. 2021	ԳՏՆ-4-րդ ՏՀ
Վրաստան	չներառված	ԱՀ4	03.04. 2021	ԵԱԶ2	13.01. 2019	ԱԿՀ (1990–2017)	03.04. 2021	ԳՏՆ-2-րդ ՏՀ
Մոլդովա	չներառված	ԱՀ4	09.02. 2018	ԵԱԶ2	19.04. 2019	ԱԿՀ (1990–2016)	24.01. 2019	ԳՏՆ-4-րդ ՏՀ
Ուկրաինա	անդամ	ԱՀ6	28.10. 2014	ԵԶ1	30.12. 2013	ԱԿՀ + ԸՀՁ (1990–2019)	15.04. 2021	ԳՏՆ-4-րդ ՏՀ

Այնուամենայնիվ, Հավելված I-ի անդամ հանդիսացող և Հավելված I-ում չներառված երկրների միջև այս տարբերակումն այլևս չի կիրառվի Փարիզի համաձայնագրի ներքո հաշվետվություններ ներկայացնելու համար: Ազգային մակարդակով սահմանված ներդրումները (ԱՍԳ) պետք է պատրաստվեն հինգ տարին մեկ պարբերականությամբ այն բոլոր երկրների կողմից, որոնք ժամանակի ընթացքում սահմանում են հավակնությունների առաջընթաց: ԱՍԳ-ներում սահմանված նպատակներին հասնելու առաջընթացը գնահատվում է Երկամյա Թափանցիկության Զեկույցում (ԵԹԶ), որը բոլոր երկրները, սկսած 2024թ.-ից պետք է ներկայացնեն երկու տարին մեկ պարբերա-կանությամբ: Երկրների կողմից ներկայացված տեղեկատվությունը կօգտագործվի կլիմայի փոփոխության դեմ պայքարի գլոբալ առաջընթացը գնահատելու համար՝ գլոբալ գույքագրման միջոցով, որն իրականացվում է հինգ տարին մեկ պարբերականությամբ (առաջին անգամ՝ 2023-ին):

3. Երկրի բնութագրերը

Փարիզի համաձայնագրում հստակ ասվում է, որ ԱՍԳ-ում ամրագրված Ազգային հավակնություններն իրենցից պետք է ներկայացնեն հնարավոր ամենաբարձր հավակնությունների մակարդակը՝ հաշվի առնելով ազգային պայմանները:

> *Փարիզյան համաձայնագիր, հոդ. 4.3. Յուրաքանչյուր Կողմի՝ ազգային մակարդակում սահմանված մասնակցության հաջորդական գործողությունները կներկայացնեն տվյալ Կողմի ազգային մակարդակում սահմանված մասնակցության ընթացիկ գործողությունների նկատմամբ առաջընթացը և կարտացոլեն Կողմի հնարավոր ամենամեծ հավակնությունը՝ ազգային տարբեր պայմանների լույսի ներքո արտացոլելով ընդհանուր, սակայն տարբերակված պատասխանատվությունն ու համապատասխան կարողությունները:*

Հետևյալ գլուխներում ներկայացվում և համեմատվում են երկրների հիմնական բնութագրերը, ինչը առաջնային պատկերացում է ապահովում ազգային տարբեր պայմանների վերաբերյալ:

3.1. Հիմնական ցուցանիշներ

Ստորև դիտարկվել են հիմնական ցուցանիշները և ներկայացվել են երկրների միջև որոշ ընդհանուր համեմատություններ՝ հիմնվելով Գծապատկեր 2-ում ներկայացված տվյալների վրա: Ավելին, ստորև, մենք պատրաստել ենք որոշ հաղորդագրություններ յուրաքանչյուր երկրի համար՝ մեկնաբանելով հիմնական ցուցանիշները և ընդգծելով այն դեպքերը, երբ բարելավումներ են արձանագրվել արտանետումների ինտենսիվության առումով, կամ տեղի է ունեցել արտանետումների աճ՝ արդյունաբերական ակտիվության աճի հետևանքով, կամ արտանետումների նվազում՝ կլիմայի հետ կապված քաղաքականության իրագործման հետևանքով, ինչպես նաև տարանջատումների (decoupling) դեպքերը:

Հաղորդագրություններ ըստ ցուցանիշների

» **Բնակչություն.** Ուկրաինան մինչ այժմ ամենամեծ երկիրն է թե՛ տարածքով, թե՛ բնակչության թվով: Երկրի բնակչությունը 2010թ.-ից նվազել է 8%-ով, նույնը նաև վերաբերում է Հայաստանին (-8%) և Վրաստանին (-16%): Բելառուսում և Մոլդովայում բնակչության թիվը համեմատաբար կայուն է, իսկ Ադրբեջանում բնակչության թիվն աճել է 8%-ով:

» **ՀՆԱ.** Բոլոր երկրներում մեծացել է տնտեսական բարեկեցությունը 2010-ից ի վեր, ընդ որում՝ Վրաստանը (+ 56%), Մոլդովան (+ 63%) և Հայաստանը (+ 46%) արձանագրել

են ՀՆԱ-ի ամենամեծ աճը: Միայն Ադրբեջանն է տնտեսական անկում ապրել 2016թ-ն, որը պայմանավորված է նավթի գների անկմամբ, սակայն դրանից հետո տնտեսապես վերականգնվել է:

» **Ջերմոցային գազերի արտանետումներ.** ՋԳ արտանետումները ամենաբարձրն են Ուկրաինայում՝ ամենամեծ երկրում, որը նաև հասել է արտանետումների ամենազգալի կրճատմանը (-18%) 2010թ.-ից ի վեր: Մոլդովան և Բելառուսը ներկայումս գտնվում են 2010թ.-ի արտանետումների մակարդակում, մինչդեռ Վրաստանը (+30%), Հայաստանը (+25%) և Ադրբեջանը (+19%) հաղորդել են 2010թ.-ից ի վեր արտանետումների զգալի աճի մասին:

» **ՋԳ/մշh.** մեկ շնչի հաշվով ջերմոցային գազերի արտանետումները տարբեր երկրներում բավականին լայն տիրույթ ունեն՝ տատանվելով 3,6 տոննա մ.շ.h. (մեկ շնչի հաշվով) (Հայաստան, 2017թ.) մինչև 9,5 տ մ.շ.h. (Բելառուս, 2019թ.): Բելառուսը և Ուկրաինան ունեն մեկ շնչի հաշվով ջերմոցային գազերի արտանետումների ամենաբարձր ցուցանիշն երը, թեև Ուկրաինայի ցուցանիշը վերջին տարիներին նվազել է (-11%-ով 2010-2019թթ.համեմատ): Բելառուսի և Մոլդովայի ցուցանիշները բավականին կայուն են, մինչդեռ մնացած բոլոր երկրներում 2010թ.-ից ի վեր նկատվել է մեկ շնչի հաշվով արտանետումների զգալի աճ (Վրաստան +55%, Հայաստան +36%, Ադրբեջան +19%):

» **ՀՆԱ/մ.շ.h.** Հայաստանը, Վրաստանը և Ուկրաինան 2010թ.-ին ունեցել են տնտեսական ինտենսիվության մոտավորապես նույն մակարդակը (2 100–2 300 €/մ.շ.h.), ՀՆԱ/մ.շ.h. արտահայտությամբ: 2010թ.-ին Ադրբեջանի և Բելառուսի գործակիցները մոտ երկու անգամ ավելի բարձր են, իսկ Մոլդովայի տնտեսական ինտենսիվությունը առայժմ ամենացածրն է: Պատկերը նույնն է վերջին տարիներին, սակայն 2016թ.-ին բոլոր երկրները գրանցել են տնտեսական աճ, բացի Ադրբեջանից:

» **ՋԳ/ՀՆԱ.** արտանետումների ինտենսիվությունը նվազել է բոլոր երկրներում, բացի Ադրբեջանից: Ինտենսիվությունն ամենաբարձրն է Ուկրաինայում, սակայն 2010-ից 2019-ը նվազել է 37%-ով, ինչը նույն միջակայքն է, ինչ Մոլդովայի դեպքում: Տնտեսական ակտիվության և արտանետումների աճի տարանջատումը ամենա-բարձրն են եղել Մոլդովայում և Ուկրաինայում:

Գծապատկեր 2. 2010թ. և վերջին տարվա հիմնական ցուցանիշները յուրաքանչյուր երկրի համար

2010						
Երկիր	Բնակչություն	ՀՆԱ	ՋԳ	ՋԳ/շունչ	ՀՆԱ/շունչ	ՋԳ/ՀՆԱ
	1000-ներ	մլն €	Գգ CO2համ	Մգ/շունչ	1000€/շունչ	Մգ/€
Հայաստան	3,249	6,976	8,497	2.61	2.15	1.22
Ադրբեջան	8,998	39,952	51,375	5.71	4.44	1.29
Բելառուս	9,480	43,157	90,695	9.57	4.55	2.10
Վրաստան	4,436	9,229	13,688	3.09	2.08	1.48
Մոլդովա	3,564	5,261	14,526	4.08	1.48	2.76
Ուկրաինա	45,783	106,389	407,124	8.89	2.32	3.83

Ամենավերջին տարին						
Երկիր	Բնակչություն	ՀՆԱ	ՋԳ	ՋԳ/շունչ	ՀՆԱ/շունչ	ՋԳ/ՀՆԱ
	1000-ներ	մլն €	Գգ CO2համ	Մգ/շունչ	1000€/շունչ	Մգ/€
Հայաստան	2,986	10,205	10,624	3.56	3.42	1.04
Ադրբեջան	9,706	34,218	61,257	6.31	3.53	1.79
Բելառուս	9,475	56,346	90,116	9.51	5.95	1.60
Վրաստան	3,718	14,392	17,766	4.78	3.87	1.23
Մոլդովա	3,551	8,588	14,578	4.11	2.42	1.70
Ուկրաինա	41,984	137,282	332,114	7.91	3.27	2.42

Տվյալների աղբյուրը՝ բնակչությունը և ՀՆԱ-ն շուկայական գներով (ընթացիկ գներ), ըստ Եվրոստատի

Նշում. Ամենավերջին տարի՝ նշանակում է վերջին տարին, որի համար երկիրը ներկայացրել է իր ՋԳ կադաստրի տվյալները ՄԱԿ ԿՓՇԿ-ին: Ամենավերջին տարին Ադրբեջանի և Մոլդովայի համար 2016թ. է, Հայաստանի և Վրաստանի համար՝ 2017թ., Բելառուսի և Ուկրաինայի համար՝ 2019թ.:

Հաղորդագրություններ ըստ երկրների

» **Հայաստան.** Հայաստանի ջերմոցային գազերի արտանետումները 1990-1995թթ. նվազել են մոտ 70%-ով, այնուհետև մինչև 2010թ. տատանվել են 7-ից 8,5 մլն տ $CO_{2համ.}$ միջև: Վերջին հասանելի տարում (2017թ.) ՋԳ գտնվում է 10,6 մլն տ մակարդակի վրա, ինչը 2010թ. համեմատ աճել է 25%-ով: Այս աճը հիմնականում պայմանավորված է եղել տնտեսական ակտիվության աճով (+46%) և հակակշռվել է բնակչության թվի նվազմամբ (-8%): Վերջին տարվա համեմատությունը ցույց է տալիս, որ մեկ ՀՆԱ-ի հաշվով արտանետումների ինտենսիվությունն ամենացածրն է մյուս երկրների համեմատ:

» **Ադրբեջան.** Ադրբեջանի ՋԳ արտանետումները 1990-ից 1995-ը նվազել են 37% -ով՝ հասնելով 52 մլն տ $CO_{2համ.}$ մակարդակի, որը մոտավորապես հավասար է 2010թ. մակարդակին: Այդ ժամանակվանից ի վեր ՋԳ արտանետումները աճել են 19%-ով՝

հասնելով 61 միլիոն տ CO2 համ.-ի 2016-ին, մինչդեռ ՀՆԱ-ն միևնույն ժամանակահատվածում նվազել է 14%-ով: 2016-ին ցածր ՀՆԱ-ն պայմանավորված էր նավթի գների անկմամբ: ՋԳ արտանետումների և ՀՆԱ-ի տարանջատում դիտարկվող ժամանակահատվածում չի նկատվում, ինչը կարելի է բացատրել նավթի վրա հիմնված տնտեսությամբ:

» **Բելառուս.** 1990-ից 1995-ը ՋԳ արտանետումները նվազել են 40%-ով և 2006թ.-ին հասել 90 մլն տ $CO_{2\ համ.}$-ի: Այդ ժամանակից ի վեր արտանետումները կայունացել են՝ որոշ չնչին տատանումներով, և 2019թ.-ին նույն մակարդակի վրա են, ինչ 2006թ.-ին: Բելառուսն արձանագրել է մեկ շնչի հաշվով ջերմոցային գազերի ամենաբարձր արտանետումները 2010թ.-ին, ինչպես նաև 2019թ.-ին: Թեև ջերմոցային գազերի արտանետումները և բնակչությունը երկու տարիներին մոտավորապես նույն մակարդակի վրա են, ՀՆԱ-ն աճել է 31%-ով: Սա հանգեցնում է արտանետումների ինտենսիվության զսպման (արտահայտված ՋԳ/ՀՆԱ) 24%-ով և դիտարկվում է տարանջատման միտում:

» **Վրաստան.** Վրաստանում ջերմոցային գազերի արտանետումները 1990-ից 1995թթ.-ին նվազել են 72%-ով (մոտ 13 մլն տ CO2 համ.): Ամենացածր մեծությունը գրանցվել է 2001-ի համար՝ 9,6 մլն տ $CO_{2\ համ.}$, այդ ժամանակից ի վեր արտանետումները աճել են մինչև 17,8 մլն տ $CO_{2համ.}$ 2017թ.-ին: Դա պայմանավորված է նաև ՀՆԱ-ի զգալի աճով (+56% 2010-2017թթ.), որտեղ գերակշռում է ծառայությունների ոլորտը: Տնտեսական ակտիվության աճը՝ կապված բնակչության 16%-ով նվազման հետ, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն, ցույց է տալիս զգալի աճ՝ 86%, իսկ ջերմոցային գազերն ըստ ՀՆԱ-ի նվազել են 39%-ով:

» **Մոլդովա.** ՋԳ արտանետումները 1990-1995թթ. նվազել են 60%-ով և հասել իրենց ամենացածր մակարդակին 2000թ.-ին՝ 11,6 մլն տ $CO_{2\ համ.}$: Այդ ժամանակից ի վեր ՋԳ արտանետումները դանդաղորեն աճել են՝ հասնելով ավելի քան 14 միլիոն տ $CO_{2համ.}$-ի, որից հետո կայունացել են: ՀՆԱ-ի էական աճը (+63% 2010-ից 2016-ը) հանգեցրեց ՋԳ արտանետումների հետագա տարանջատման և տնտեսական զարգացման, որը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսական գործունեության և ծառայությունների ոլորտով:

» **Ուկրաինա.** ՋԳ արտանետումները Ուկրաինայում նվազել են 55% -ով 1990 -2000թթ. ժամանակահատվածում և հասել են ամենացածր մակարդակին 428 մլն տ $CO_{2համ.}$՝ 2000թ.: Դրանից հետո տեղի է ունեցել ջերմոցային գազերի արտանետումների հետագա նվազում (-18% 2010–2019 թթ.), ինչը մասամբ կարող է վերագրվել երկրի արևելյան շրջաններում հակամարտության հետևանքով առաջացած արդյունաբերական ակտիվության նվազմանը: Այնուամենայնիվ, 2010-ից 2019թթ. ընկած

ժամանակաընթացքում Ուկրաինայում ՀՆԱ-ի աճը կազմել է 29%: Միևնույն ժամանակ բնակչությունը նվազել է 8%-ով: Արտանետումների ինտենսիվության առումով (ՋԳ/ՀՆԱ) արձանագրվել է բարելավում, ինչը հանգեցրել է հետագա տարանջատման:

3.2. ՋԳ արտանետումների պատմական միտումներ

Բոլոր վեց երկրների տնտեսությունները տուժել են 1990-ականների սկզբին Խորհրդային Միության փլուզման պատճառով: Արդյունքում անկախ պետություններին հաջողվել է հաջորդ տարիների ընթացքում ձևավորել կայուն պայմաններ, որոնք թույլ են տվել ապահովել տնտեսական աճ: Սա է նաև պատճառը, որ 1990-ից ի վեր երկրների կողմից արձանագրված ջերմոցային գազերի կրճատումները զգալի են (տես Գծապատկեր 3-ի կապույտ սյունակները): Հետևաբար, ջերմոցային գազերի արտանետումների այս վաղ կրճատումները կապված չեն կլիմայական քաղաքականության հետ: Դիտարկելով ջերմոցային գազերի արտանետումների միտումները 2010թ.-ից ի վեր (տե՛ս Գծապատկեր 3-ի նարնջագույն սյունակները), կարելի է տեսնել, որ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում արտանետումների զգալի աճը հիմնականում պայմանավորված է տնտեսության աճով և արդյունաբերական գործունեությամբ:

Բելառուսի և Մոլդովայի ջերմոցային գազերի արտանետումները 2017 և 2016թթ., համապատասխանաբար, մոտավորապես նույն մակարդակի վրա են, ինչ 2010թ.: Բելառուսի դեպքում պատճառներից մեկն այն է, որ արդյունաբերության ոլորտներում էներգաարդյունավետության բարձրացման քաղաքականությունը արձանագրել է դրական արդյունք: Մոլդովայում տնտեսությունը բնութագրվում է գյուղատնտեսական գործունեության սահմանափակ ծավալով, որը վերջին տարիներին առանձնապես չի փոխվել:

Ուկրաինան միակ երկիրն է, որտեղ 2010-2019թթ. կարելի է նկատել ՋԳ արտանետումների նվազում, ինչը պայմանավորված է 2014/2015թթ. տնտեսական ճգնաժամով, ինչպես նաև էներգաարդյունավետության բարելավմամբ (2010-2018 թթ.-ին վերջնական էներգիայի սպառում՝ -29%) և վերականգնվող էներգիայի օգտագործման ընդլայնմամբ:

Էներգետիկ, ներառյալ տրանսպորտի ոլորտը, որը ներառում է հանածո վառելիքի այրման հետևանքով առաջացած արտանետումները և հանքարդյունաբերության, բեռնաթափման և փոխադրման ընթացքում ցանկացած արտահոսքերից գոյացած արտանետումները, բոլոր երկրներում հանդիսանում է ամենախոշոր ոլորտը: Ամենաբարձր տեսակարար կշիռն ունի Ադրբեջանը՝ 79%, իսկ ամենացածրը՝ Վրաստանը՝ 60%: Վրաստանն իր էլեկտրաէներգիայի կարիքների մոտ 75%-ը բավարարում է հիդրոէներգիայի միջոցով: Հանածո էներգիան՝ հիմնականում բնական

գազ և նավթ, ներկրվում է: Մյուս կողմից, Ադրբեջանը նավթի վրա հիմնված տնտեսություն է, որտեղ նավթի և գազի արդյունահանումն ու արտահանումը գերակշռում են ՀՆԱ-ի զարգացման մեջ:

Գծապատկեր 3. ՋԳ ընդհանուր արտանետումների հարաբերական փոփոխություն՝ բացառությամբ. ՀՕՀՕՓԱՏ



Նշում. Ամենավերջին տարի՝ նշանակում է վերջին տարին, որի համար երկիրը ներկայացրել է իր ՋԳ կադաստրի տվյալները ՄԱԿ ԿՓՇԿ-ին: Ամենավերջին տարին Ադրբեջանի և Մոլդովայի համար 2016թ. է, Հայաստանի և Վրաստանի համար՝ 2017թ., Բելառուսի և Ուկրաինայի համար՝ 2019թ.:

Արդյունաբերական արտանետումները ամենաբարձր մասնաբաժինը Ուկրաինայինն է, որտեղ երկաթի և պողպատի արտադրությունն առաջացնում է CO_2-ի բարձր արտանետումներ: Արդյունաբերական արտանետումների մեջ ամենացածր մասնաբաժինն ունեն Ադրբեջանն ու Մոլդովան, քանի որ Ադրբեջանում արդյունաբերական ակտիվությունը կապված է առաջնային էներգիայի արտադրության հետ (ընդգրկված է էներգետիկայի ոլորտում), իսկ Մոլդովայի տնտեսությունը ձևավորվում է գյուղատնտեսական գործունեության և ավելի քիչ՝ արդյունաբերական օբյեկտների հաշվին:

ՋԳ արտանետումները, ազոտի օքսիդը (N_2O) և մեթանը (CH_4), որոնք առաջանում են գյուղատնտեսական գործունեությունից, ինչպիսիք են գոմաղբի կառավարումը, պարարտանյութերի օգտագործումը և աղիքային խմորումը, ամենաբարձրն են Բելառուսում և Վրաստանում: Թափոններից մեթանի արտանետումները, որոնք հիմնականում առաջանում են աղբավայրերում թափոնների անաէրոբ տարրալուծման արդյունքում, բոլոր երկրներում կազմում են ընդհանուր արտանետումների 10%-ից ցածր:

Հողօգտագործման, հողօգտագործման փոփոխության և անտառային տնտեսության ոլորտը (ՀՕՀՕՓԱՏ) կարող է հանդիսանալ ինչպես ածխածնի արտանետման աղբյուր, այնպես և կլանիչ: Բոլոր երկրներում, բացառությամբ Ուկրաինայի, արտանետումների մակարդակն ավելի բարձր է, քան ոլորտի գոյացրած արտանետումները, հետևաբար այդ ոլորտը հանդիսանում է ածխածնի կլանիչ: Բելառուսում և Վրաստանում, որտեղ տարածքի մոտ 40%-ը կազմում են անտառային հողերը, կլանումն ամենաբարձրն է:

Գծապատկեր 4. Ոլորտների արտանետումների տեսակարար կշիռը ըստ երկրների, ՋԳ վերջին հասանելի կադաստրի կազմման տարում



Նշում. Ամենավերջին տարի՝ նշանակում է վերջին տարին, որի համար երկիրը ներկայացրել է իր ՋԳ կադաստրի տվյալները ՄԱԿ ԿՓՇԿ-ին: Ամենավերջին տարին Ադրբեջանի և Մոլդովայի համար 2016թ. է, Հայաստանի և Վրաստանի համար՝ 2017թ., Բելառուսի և Ուկրաինայի համար՝ 2019թ.:

4. Ազգային մակարդակով սահմանված գործողություններ/ներդրումներ

Այս գլուխը ներկայացնում է հիմնական տեղեկատվություն երկրների կողմից ներկայացված ԱՍԳ-ներից, այդ թվում՝ տեղեկատվություն Հայաստանից, Բելառուսից, Վրաստանից, Մոլդովայից և Ուկրաինայից: Ներկայացված է Փարիզի համաձայնագրի ներքո Ազգային մակարդակով սահմանված նախատեսված գործողությունների (ԱՍՆԳ) և վերջերս՝ արդիականացված Ազգային մակարդակով սահմանված գործողությունների միջոցով ներկայացված տեղեկատվության և թիրախների ակնարկ:

Գլուխը նաև անդրադառնում է երկրներում ԱՍԳ-ների պատրաստման և իրագործման գործընթացին և տրամադրում է ինչպես ԱՍԳ-ներում հասանելի, այնպես էլ ուղղակի խորհրդակցությունների միջոցով ստացված տեղեկատվությունը: Վերջում տրվում է քաղված դասերի ամփոփում և լավագույն փորձի օրինակներ:

4.1. Հիմնական տեղեկություններ ԱՍՆԳ-ների և արդիականացված ԱՍԳ-ների վերաբերյալ

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ից, բոլոր երկրները մեծացրել են մինչև 2030թ. ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու իրենց հավակնությունները: **Հավակնությունների աճը** տատանվում է 0%-ից մինչև 25%: Հայաստանի հավակնությունների աճը չի կարող քանակայնորեն գնահատվել, քանի որ Հայաստանն օգտագործել է տարբեր թիրախների տեսակներ իր ԱՍՆԳ-ի և ԱՍԳ-ի համար: ԱՍՆԳ-ն սահմանել է առավելագույն տարեկան ինտենսիվության ցուցանիշը (ՋԳ/մեկ շնչի հաշվով) տվյալ ժամանակահատվածի համար, մինչդեռ արդիականացված ԱՍԳ-ն սահմանում է 2030թ. համար բացարձակ կրճատման թիրախ:

Բոլոր երկրների համար ընդհանուր է այն, որ իրենց **ելակետային տարին 1990թ.-ն է,** և թիրախը արտահայտված է **մեկ տարվա՝ 2030թ. համար**: Բոլոր երկրների համար նույնն է նաև իրականացման ժամկետը, այն է՝ **2021–2030թթ**: Բոլոր երկրները նշում են, որ իրենց ԱՍԳ-ն ներկայացնում է **տնտեսության ողջ ծավալով կրճատման թիրախ**, ինչպես և սահմանված է եղել ԱՍՆԳ-ներում:

Երեք երկրներ՝ Մոլդովան, Վրաստանը և Բելառուսը, որոշել են սահմանել **ոչ պայմանական թիրախ և պայմանական թիրախ՝** հիմք ընդունելով լրացուցիչ միջազգային ֆինանսական և տեխնոլոգիական աջակցությունը: Միայն մեկ տեսակի թիրախ սահմանող երկրներին անհրաժեշտ կլինի նաև միջազգային ֆինանսական ռեսուրսների հասանելիություն՝ առաջընթացի հասնելու և թիրախները իրագործելու համար:

Երեք երկրներ (Հայաստան, Վրաստան և Ուկրաինա) սահմանել են նաև **լրացուցիչ այլ թիրախներ**, մինչդեռ ԱՍԳՆ-ների դեպքում այդպիսի երկրները երեքն են եղել: Հայաստանը որպես լրացուցիչ թիրախ սահմանել է վերականգնվող էներգիայի մասնաբաժնի կրկնապատկումը, Վրաստանը նաև ոլորտային նպատակներ է նախանշել, իսկ Ուկրաինան հայտարարել է, որ մինչև 2060թ. կհասնի ածխածնային չեզոքության:

Ուկրաինան իր ԱՍՆԳ-ում սահմանել էր արտանետումների թիրախ՝ առանց ՀՕՀՕՓԱՏ ոլորտի, իսկ այժմ սահմանել է **զուտ կրճատման թիրախ**, այսինքն՝ ներառված են նաև կլանումները ՀՕՀՕՓԱՏ ոլորտի միջոցով: Մոլդովան պահպանել է ԱՍՆԳ-ով սահմանված իր մոտեցումը՝ ներկայացնելով զուտ կրճատման թիրախ: Հայաստանը նշում է, որ իր թիրախը վերաբերում է և՛ ընդհանուրին, ներառյալ ՀՕՀՕՓԱՏ ոլորտը, և՛ ընդհանուրին, առանց ՀՕՀՕՓԱՏ-ի, մինչդեռ Վրաստանի թիրախը վերաբերում է ՋԳ ընդհանուր արտանետումների կրճատմանը, առանց ՀՕՀՕՓԱՏ-ի:

Նաև, ԱՍԳ-ներում **բարելավվել են գենդերային հավասարության** նկատառումները: ԱՍՆԳ-ում գենդերային ասպեկտներին անդրադարձ չի արվել երկրների կողմից, մինչդեռ արդիականացված ԱՍԳ-ներում գենդերային հարցերին անդրադարձել են Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան:

Երկրները իրենց ԱՍԳ-ներում ներառել են բոլոր **ջերմոցային գազերը** (CO2, CH4, N2O, HFCs, PFCs և NF3), բացառությամբ Հայաստանի, որը չի ներառել PFC-ները և NF3-ը: Հնարավոր է, որ այդ գազերը Հայաստանում չեն դիտվում, բայց այդ մասին հստակ նշում չի կատարված: Չնայած բոլոր վեց երկրները հայտարարում են, որ իրենք ընդգրկել են բոլոր **ոլորտները**, Վրաստանը և Հայաստանը բացառել են ՀՕՀՕՓԱՏ ոլորտն իրենց թիրախների խմբից:

Ինչ վերաբերում է **հարմարվողականության բաղադրիչին**, միայն Մոլդովան է ներառել հարմարվողականությանն առնչվող ամբողջական գլուխ իր արդիականացված ԱՍԳ-ում: Վրաստանը ներառել է որոշ հարմարվողականության միջոցառումներ, իսկ Հայաստանն ու Ուկրաինան անդրադարձել են հարմարվողականության որոշ տարրերի: Հարմարվողականության բաղադրիչի հետագա բարելավումներ են ակնկալվում ԱՍՆԳ-ի հաջորդ ցիկլում:

Աղյուսակ 2. ԱՍՆԳ-ում և արդիականացված ԱՍԳ-ում երկրների կողմից ներկայացված տեղեկատվության ակնարկ

Երկիր	ԱՍԳ գործընթացի փուլ	Ներկայացման ամսաթիվը	Ժամկետներ	Ծածկույթը	Տիպ	Նպատակը	Մեղմման թիրախ (ելակետային տարի)	Այլ թիրախներ	Հարմարվողականություն
Հայաստան	ԱՍՆԳ	23.03. 2017	2015–2030	- CO2, CH4, N2O, ՀՖՔ - բոլոր ոլորտները, բացի գյուղատնտեսությունից	ոչ պայմանական	տարեկան միջինը 5,4 տ $CO_{2համ.}$ մեկ շնչի հաշվով	**Կ/Չ**	Էկոհամակարգային առումով չեզոք ՋԳ արտանետումները 2050-ին (2,07 տ $CO_{2համ.}$/մ.շ.հ.)	Անդրադարձված է
	Արդիականացված ԱՍԳ	05.05. 2021	2021–2030	- բոլոր գազերը բացի NF3-ից - բոլոր ոլորտները - ողջ տնտեսության համար	ոչ պայմանական	40% նվազում 1990-ի մակարդակի համեմատ՝ ՀՕՀՕՓԱՏ հետ և առանց	**-40% (1990)**	- Վերականգնվող էներգիայի մասնաբաժնի կրկնապատկում - Հարմարվողականության գործողությունների մշակում	Անդրադարձված է
Ադրբեջան	ԱՍՆԳ	09.01. 2017	2021–2030	- CO2, CH4, N2O, ՀՖՔ, CF4 - բոլոր ոլորտները բացի արդյունաբերությունից	ոչ պայմանական	35% նվազում 1990-ի մակարդակի համեմատ	**-35% (1990)**	- Ոլորտային միջոցառումների նկարագրում	Անդրադարձված է
	Արդիականացված ԱՍԳ	նախագիծ	2021–2030						
Բելառուս	ԱՍՆԳ	21.09. 2016	2021–2030	- բոլոր գազերը - բացի ՀՕՀՕՓԱՏ - ողջ տնտեսության համար	ոչ պայմանական	առնվազն 28% նվազում 1990-ի մակարդակի համեմատ	**-28% (1990)**	- Անտառածածկ տարածքների ավելացում - Տորֆային տարածքների վերականգնում	Անդրադարձված է

Երկիր	ԱՍԳ գործընթացի փուլ	Ներկայացման ամսաթիվը	Ժամկետներ	Ծածկույթը	Տիպ	Նպատակը	Մեղմման թիրախ (ելակետային տարի)	Այլ թիրախներ	Հարմարվողականություն
								- Աճելավայրերի պահպանում	
	Արդիականացված ԱՍԳ	նախագիծ	2021–2030	- բոլոր գազերը - բոլոր ոլորտները - ողջ տնտեսության համար	պայմանական	40% նվազում 1990-ի մակարդակի համեմատ՝ ՀՕՀՕՓԱՏ հետ և առանց	**-40% զուտ (1990)**		Նշված է
					ոչ պայմանական	35% նվազում 1990-ի մակարդակի համեմատ՝ ՀՕՀՕՓԱՏ հետ և առանց	**-35% զուտ (1990)**		
Վրաստան	ԱՍՆԳ	08.05.2017	2021–2030	- բոլոր գազերը - բացի ՀՕՀՕՓԱՏ - ողջ տնտեսության համար	պայմանական	25% նվազում ԲԳ սցենարից ցածր = -40% 1990թ. մակարդակների համեմատ	**-40% (1990)**	Անտառների համար պայմանական և ոչ պայմանական թիրախ	Ներառված տեղեկատվություն
					ոչ պայմանական	15% նվազում ԲԳ-ի սցենարից ցածր	**-32% (1990)**[1]		
	Արդիականացված ԱՍԳ	05.05.2021	2021–2030	- բոլոր գազերը - բացի ՀՕՀՕՓԱՏ - ողջ տնտեսության համար	պայմանական	- իր ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումների –50–57%-ը մինչև 2030-ը, 1990-ի համեմատ	**-53% (1990)**[2]	Ոլորտային նպատակներ	Հարմարվողականության միջոցառումները ներառյալ
					ոչ պայմանական	35% ցածր իր ներքին ընդհանուր ջերմոցային գազերի արտանետումների 1990-ի մակարդակից՝ մինչև 2030	**-35% (1990)**		
Մոլդովա	ԱՍՆԳ	25.09.2015	2021–2030	- բոլոր գազերը - բոլոր ոլորտները - ողջ տնտեսության համար	պայմանական	մինչև 2030-ը՝ մինչև -78% 1990-ի համեմատ	**-78% զուտ (1990)**	—	Հարմարվողականության վերաբերյալ հաղոր-
					ոչ պայմանական	մինչև 2030-ը՝ -64–67% 1990-ի համեմատ	**-65% զուտ (1990)** [3]		

Երկիր	ԱՍԳ գործընթացի փուլ	Ներկայացման ամսաթիվը	Ժամկետներ	Ծածկույթը	Տիպ	Նպատակը	Մեղմման թիրախ (ելակետային տարի)	Այլ թիրախներ	Հարմարվողականություն
									դագրություն
	Արդիականացված ԱՍԳ	04.03. 2020	2021–2030	- բոլոր գազերը - բոլոր ոլորտները - ողջ տնտեսության համար	պայմանական	մինչև 2030-ը՝ մինչև -88% 1990-ի համեմատ	**-88% զուտ (1990)**	—	Հարմարվողականության վերաբերյալ հաղորդագրություն
					ոչ պայմանական	մինչև 2030-ը՝ -70% 1990-ի համեմատ	**-70% զուտ (1990)**		
Ուկրաինա	ԱՍՆԳ	19.09. 2016	2021–2030	- բոլոր գազերը - բացի ՀՕՀՕՓԱՏ - ողջ տնտեսության համար	ոչ պայմանական	Այն չի գերազանցի 1990-ի. ՋԳ արտանետումների մակարդակի 60% 2030-ին	**-40% (1990)**	—	Նշված
	Արդիականացված ԱՍԳ	31.07. 2021	2021–2030	- բոլոր գազերը - բոլոր ոլորտները - ողջ տնտեսության համար	ոչ պայմանական	Տնտեսության ողջ ծավալով ՋԳ արտանետումների զուտ ներքին կրճատում 65% չափով 2030-ին՝ 1990-ի համեմատ	**-65% զուտ (1990)**	Ածխածնային չեզոքություն մինչև 2060թ.	Նշված

(1) Այս արժեքը որպես այդպիսին չի ներկայացվել ԱՍԳ-ում, սակայն հաշվարկվել է ԱՍԳ-ում ներկայացված տեղեկատվության հիման վրա:

(2) ԱՍՆԳ-ում թիրախները ներկայացվում են -50-ից -57% միջակայքում:

(3) ԱՍՆԳ-ում թիրախները ներկայացվում են -64-ից -67% միջակայքում:

4.2. Երկրի թիրախները արդիականացված ԱՍԳ-ներում

Արդիականացված ԱՍԳ-ների հավակնությունները համեմատելու համար ՋԳ արտանետումների միտումը ներկայացվում է որպես ցուցիչ, որտեղ ելակետային տարին (1990-ը՝ բոլոր երկրների համար) համարժեք է 100-ի (տես Գծապատկեր 5) և համեմատվում է արդիականացված ոչ պայմանական ԱՍԳ թիրախի հետ՝ յուրաքանչյուր երկրի համար:

Այս համեմատությունը ցույց է տալիս, որ Վրաստանը կարող է ավելացնել իր ջերմոցային գազերի արտանետումները՝ առանց ՀՕՀՕՓԱՏ ոլորտի մինչև 26%-ի չափով՝ համեմատած 2017թ. մակարդակի հետ, և իրագործել իր 2030թ. թիրախը: Բացի այդ, Հայաստանը և Բելառուսը մինչև 2030թ. կարող են ավելացնել իրենց մաքուր ջերմոցային գազերի արտանետումները համապատասխանաբար 19%-ով և 13%-ով՝ և միևնույն է՝ իրագործել իրենց թիրախը: Մոլդովան մինչև 2030թ. պետք է ապահովի 1% կրճատում 2016թ.-ի մակարդակի համեմատ, իսկ Ուկրաինան մինչև 2030թ. պետք է ապահովի 3%-ով կրճատում:

Սա հստակ ցույց է տալիս, որ հավակնությունները շատ տարբեր են, և քանի որ երկրներից որևէ մեկը իր արդիականացված ԱՍԳ-ում չի նշել արտանետումների գագաթնակետային արժեքներ, ապա արտանետումների աճ կարելի է ակնկալել առնվազն երեք երկրներից՝ ներկայիս մակարդակի համեմատ:

Գծապատկեր 5. ՋԳ արտանետումները մեկ երկրի համար և արդիականացված ոչ պայմանական ԱՍԳ թիրախները 2030-ի համար



Ծանոթագրություն. Վրաստանի ջերմոցային գազերի արտանետումները ներկայացված են որպես գումարային ընդհանուր մեծություններ՝ առանց ՀՕՀՕՓԱՏ-ի, մինչդեռ մյուս երկրները ներկայացված են որպես գումարային ընդհանուր մեծություններ՝ ներառյալ ՀՕՀՕՓԱՏ-ը: Այն համահունչ է ներկայացված ԱՍԳ թիրախների շրջանակին:

4.3. ԱՍԳ-ների նախապատրաստում

Հաջորդ ենթագլխում մենք ներկայացնում ենք յուրաքանչյուր երկրի համար արդիականացված ԱՍԳ-ի պլանավորման և նախապատրաստման գործընթացի ամփոփագիրը: Տրամադրված տեղեկատվությունը հիմնված է ներկայացված ԱՍԳ փաստաթղթերի և անմիջականորեն երկրներից ստացված տեղեկատվության վրա:

4.3.1. Հայաստան

Իր սկզբնական ԱՍԳ-ում Հայաստանը ներկայացրել է տարեկան 5,4 տ $CO_{2համ.}$ ինտենսիվության թիրախ մինչև 2030թ. իսկ 2050թ. համար երկարաժամկետ թիրախ՝ 2,07 տ $CO_{2համ.}$ մեկ շնչի հաշվով: ԱՍԳ-ի արդիականացման շրջանակներում Հայաստանը սահմանել է 2030թ. համար մեղմման այլ տեսակի թիրախ, այն է՝ հարաբերական կրճատման թիրախ: 2030թ. այս թիրախը որոշվել է արտանետումների սցենարների մշակման միջոցով: Ելակետային/հղումային տարին (1990թ.) և արտանետումների պատմական տվյալները (1990–2017թթ.) հիմնված են ՋԳ-ի վերջին կադաստրի վրա, որը ներկայացվել է Երրորդ երկամյա առաջընթացի զեկույցի (BUR3) շրջանակներում՝ 2021-ին: 4-րդ ազգային հաղորդագրության մեջ (4ԱՀ) ներկայացված են նաև ԱԳԱՕ, Գյուղատնտեսություն և Թափոններ ոլորտների վերաբերյալ կանխատեսումները: Միայն էներգետիկ ոլորտի համար, որը արտացոլում է 2017թ. ընդհանուր արտանետումների 67%-ը, հաշվարկվել են նոր կանխատեսումներ, քանի որ ՀՀ կառավարության որոշմամբ 2021թ. ընդունվել է նոր էներգետիկ ռազմավարություն՝ *«Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչև 2040թ.)»:* Նոր էներգետիկ ռազմավարության հիմնական դրույթներն են վերականգնվող էներգիայի օգտագործման ավելացումը (ներկայիս մասնաբաժնի կրկնապատկումը մինչև 2030թ.) և Հայկական ատոմակայանի շահագործման հետագա երկարաձգումը: Երկրի էներգետիկ անվտանգության հիմնական առաջնահերթությունները և ցածր ածխածնային զարգացման հիմնական խթաններն են՝ էներգիայի արդյունավետության բարձրացումը, էներգիայի պահպանումը և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործումը: Ավելին, հարկ է նշել, որ Հայաստանի կառավարությունը չի սուբսիդավորում հանածո վառելիքի օգտագործումը: Հիմնական նկատառումները, որոնք կառավարությունը հաշվի է առել երկրի ԱՍԳ-ն արդիականացնելիս, ներառել են՝ երկրի տնտեսության աճի շարունակականության ապահովումը, աղքատության կրճատումը, շրջակա միջավայրի պահպանությունը, կայուն զարգացման նպատակների իրագործումը, միաժամանակ բարձրացնելով ազգային էներգետիկ անվտանգությունը և ապահովելով մատչելի և մաքուր էներգիայի մատակարարումը:

ԱՍԳ-ի արդիականացման հանրային քննարկումների գործընթացն իրականացվել է կառավարության ընթացակարգերին համապատասխան, ներառյալ քաղաքացիական հասարակության ներգրավմամբ, գենդերային պատասխանատու եղանակով, որին հաջորդել է խորհրդարանական քննարկումը:

Հայաստանը նաև դիտարկել է հարմարվողականությունը իր ԱՍԳ պլանավորման մեջ և ներառել է տեղեկատվություն հարմարվողականության իր մոտեցումների վերաբերյալ: Այն բխում է կլիմայի փոփոխությունը սահմանափակելու նպատակից՝ բավարար ժամկետներում, որպեսզի էկոհամակարգերը բնական կերպով հարմարվեն կլիմայի փոփոխությանը: Սա հիմք է հանդիսանում 2021-2025թթ. Ազգային հարմարվողականության ծրագրի և միջոցառումների ցանկի մշակման համար, որը հաստատվել է Կառավարության կողմից 2021թ. մայիսին:

Արդիականացված ԱՍԳ-ն հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության (2021թ. ապրիլի 22-ի N610-L) որոշմամբ, որը նախատեսում է ԱՍԳ-ի իրագործման տասնամյա ժամկետ (2021–2030թթ.) և պահպանելով 2050թ. մեղմման նպատակը՝ հասնել մեկ շնչի հաշվով 2,07 արտանետումների տ $CO_{2\ \text{համ.}}$ մակարդակի:

4.3.2. Բելառուս

2016թ., և հաշվի առնելով Փարիզի համաձայնագրի վավերացումը, Բելառուսի կառավարությունը նշանակեց Բնական պաշարների և շրջակա միջավայրի պահպանության նախարարությունը որպես Բելառուսի կողմից Փարիզի համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարման համար լիազորված մարմին: Հետագա տարիներին Բելառուսը սկսեց իրավական դաշտ ձևավորել նոր ազգային կլիմայական քաղաքականության համար, որը նպատակաուղղված է նաև երկրի կայուն զարգացմանը, էներգիայի օգտագործման և ածխածնային ինտենսիվ տնտեսական գործունեության կրճատմանը:

Իր սկզբնական ԱՍԳ-ն արդիականացնելու համար Բելառուսը մշակել է արտանետումների նոր սցենարներ՝ ՋԳ-ի վերջին կադաստրի հիման վրա՝ օգտագործելով 2006թ. ԿՓՓՄԽ ուղեցույցները: 2030թ. հնարավոր թիրախները որոշելու համար մշակվել է երկու սցենար, որոնցից յուրաքանչյուրը հաշվի է առնում չափավոր և լավատեսական տնտեսական կանխատեսումները: Հիմնական տնտեսական հարաչափ է համարվել արտադրությունը, որը նկարագրում էր, թե որքան ապրանքներ և ծառայություններ կարող է արտադրել տնտեսությունը՝ որպես ռեսուրսների օգտագործման արդյունավետության նախադրյալներ հաշվի առնելով առկա մարդկային և ֆիզիկական կապիտալի և առկա տեխնոլոգիաների ծավալը:

Էներգետիկա, ԱԳԱՕ, Գյուղատնտեսություն և Թափոններ ոլորտների համար ընտրվել է «վարից վեր» մոտեցում՝ օգտագործելով հիմնական խթանիչ գործոնները և որոշելով դրանց զարգացումը՝ տնտեսական հարաչափերի և քաղաքականության և միջոցառումների հիման վրա: Նշանակալի բարելավում էր ՀՕՀՕՓԱՏ ոլորտի դիտարկումը, որը ներառված չէր ԱՍՆԳ-ում: ՀՕՀՕՓԱՏ ոլորտի կլանման կարողությունը գնահատվել է ազգային պետական անտառային կադաստրի և անտառային ռեսուրսների հաշվառման տվյալների հիման վրա:

Տեղի են ունեցել երկու ձևաչափի՝ անմիջական և գրավոր խորհրդակցություններ՝ ներառյալ պետական մարմինների, գիտական համայնքի, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավմամբ: 2020թ.հոկտեմբերին և 2021թ. փետրվարին անցկացվել են մի քանի առկա հանդիպումներ՝ քաղաքականության վերլուծության, ընտրված օգտագործված մեթոդաբանության, յուրաքանչյուր ոլորտի (էներգիա, ԱԳԱՕ, թափոններ, գյուղատնտեսություն, ՀՕՀՕՓԱՏ) համար մշակված մեղմման սցենարների և արդիականացված ԱՍԳ-ի մեղմման թիրախի բացահայտման նպատակով ձևավորված ամփոփ սցենարների քննարկման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ, առկա խորհրդակցություններում ներգրավվել է 100 մարդ (76% կանանց մասնակցություն):

Ի հավելումն առկա խորհրդակցությունների, տեղի են ունեցել լրացուցիչ գրավոր խորհրդակցություններ՝ երկրորդ ԱՍԳ-ի վերլուծությամբ համակցված հաշվետվության վերաբերյալ: Շահագրգիռ կողմերը ներկայացրել են մեկնաբանություններ և առաջարկել բարելավումներ, որոնք ներառվել են վերջնական տարբերակում:

Հարմարվողականության բաղադրիչը դեռևս ներառված չէ ԱՍԳ-ում, քանի որ հարմարվողականության գործողությունների ազգային ծրագիրը նախապատրաստման փուլում է և ակնկալվում է այն ավարտել 2022թ.-ին:

4.3.3. Վրաստան

Վրաստանում կլիմայի փոփոխության քաղաքականությունը համակարգվում է Շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարության կողմից, որը նաև համակարգել է ԱՍԳ-ի նախապատրաստումը: Վրաստանի կառավարությունը 2020թ.-ին ստեղծել է կառավարական խորհրդակցական մարմին՝ Կլիմայի փոփոխության խորհուրդը, որը պետք է իրականացնի և հետամուտ լինի արդիականացված ազգային մակարդակով սահմանված ներդրումների իրագործմանը: Խորհուրդն իրենից ներկայացնում է կլիմայի քաղաքականության իրականացման թափանցիկության ապահովման գործիք՝ սույն փաստաթղթով սահմանված արտանետումների թիրախների իրագործման նպատակով:

ԱՍԳ-ի պատրաստումը սերտորեն փոխկապակցված է 2030թ. Կլիմայի փոփոխության ռազմավարության և գործողությունների ծրագրի հետ, որը հանդիսանում է ԱՍԳ-ի մեղմման մասի իրականացման պլանը: ՋԳ կադաստրի հիման վրա (1990–2015թթ.) յուրաքանչյուր ոլորտի համար սահմանվել են մի շարք միջոցառումներ՝ յուրաքանչյուր ոլորտի համար մեղմման իրագործելի թիրախը գնահատելու համար: Հաշվարկվել է հողումային և քաղաքականության սցենար յոթ տնտեսական ոլորտների համար՝ տրանսպորտ, շենքեր, էներգիայի արտադրություն և փոխանցում, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, թափոններ և անտառային տնտեսություն: Արդիականացված

ԱՍԳ-ում նշված մեղմման ոլորտային թիրախները հիմնվում են Կլիմայի ռազմավարության և Գործողությունների ծրագրում կիրառված ենթադրությունների և մեթոդաբանությունների վրա: EX-Ante Carbon-balance Tool-ի 7-րդ տարբերակը կիրառվել է Անտառային ոլորտի մեղմացման թիրախների սահմանման համար: LEAP գործիքակազմը կիրառվել է էներգիայի հետ առնչվող ոլորտներում ջերմոցային գազերի (CO2, CH4 և N2O) արտանետումների սահմանափակումների գնահատման համար:

Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունը վարում էին Շրջակա միջավայրի պահպանության և Գյուղատնտեսության նախարարությունները, և շահագրգիռ կողմերը ներառում էին ոչ միայն պետական կառույցներ, այլև գիտական համայնքի, քաղաքացիական հասարակության, ՄԱԿ-ի կառույցների, միջազգային ֆինանսական հաստատությունների ներկայացուցիչների և դոնորների: Վրաստանը ստեղծել է յոթ ոլորտային աշխատանքային խմբեր, որոնք համակարգված կերպով իրականացրել են ոլորտային թիրախների և իրականացման միջոցառումների քննարկումներ:

Վրաստանը նաև ներառել է հարմարվողականության նպատակ, որով հաստատում է տնտեսական տարբեր ոլորտների հարմարվողականության կարողությունների ուսումնասիրությունը շարունակելու, ինչպես նաև համապատասխան հարմարվողականության միջոցառումների պլանավորման և իրականացման իր հանձնառությունը՝ մոբիլիզացնելով ներքին և միջազգային ռեսուրսները կլիմայի փոփոխության նկատմամբ հատկապես խոցելի հատվածների համար: ԱՍԳ-ն ներառում է մի քանի հարմարվողականության միջոցառումներ, որոնք պետք է ընդունվեն որպես Ազգային հարմարվողականության պլանի մաս՝ վերը նշված նպատակին հասնելու համար: Այս միջոցառումները հիմնականում վերաբերում են հարմարվողական կարողությունների զարգացման գնահատումներին մի շարք ոլորտներում, օրինակ՝ գյուղատնտեսական արտադրության, ափամերձ և լեռնային էկոհամակարգերի, մարդու առողջության և այլն:

ԱՍԳ-ում անդրադարձ է կատարվել նաև գենդերային հիմնահարցերին և կլիմայական փոփոխություններին՝ հղում կատարելով Գենդերային հավասարության մասին ազգային օրենքին և ներկայացնելով ուղիները և միջոցառումները, որոնց միջոցով առաջիկայում նախատեսվում է ավելացնել կանանց ներգրավվածությունը:

4.3.4. Մոլդովա

Մոլդովան առաջին երկրներից էր, որը ներկայացրել է իր արդիականացված ԱՍԳ-ն: ԱՍԳ-ի նախապատրաստման աշխատանքները համակարգվել են Գյուղատնտեսության, Տարածաշրջանային զարգացման և շրջակա միջավայրի նախարարության Օդի պաշտպանության և կլիմայի փոփոխության բաժնի կողմից, իսկ փաստաթուղթը պատրաստվել է յոթ փորձագետներից կազմված խումբ հանդիսացող ազգային արտաքին խորհրդատուների կողմից:

Արդիականացված ԱՍԳ-ի վերլուծական հիմքը նույնն էր, ինչ օգտագործվել է 2019թ. ներկայացված 2-րդ երկամյա առաջընթացի զեկույցի (BUR, ԵԱՋ) համար, որն իրենից ներկայացնում է 1990-2016թթ. ընդգրկող ժամանակահատվածի ջերմոցային գազերի կադաստր, որում նաև ներառվել են արտանետումների սցենարները: «Միջոցառումներով» (WM) արտանետումների սցենարը հանգեցրեց ոչ պայմանական ԱՍԳ թիրախի, իսկ «լրացուցիչ միջոցառումներով» (WAM) սցենարը պայմանական ԱՍԳ թիրախի՝ 2030թ. համար: 2-րդ ԵԱՋ-ում ներկայացված քաղաքականություններն ու միջոցառումները լայնորեն քննարկվել են բոլոր ազգային շահագրգիռ կողմերի (պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, գիտակրթական հաստատությունների, ՀԿ-ների, մասնավոր հատվածի և այլն) հետ 2017-2018թթ. ընթացքում: ԱՍԳ2-ի նախագիծը տեղադրվել է մեկնաբանությունների համար <www.clima.md> կայքում և քննարկվել և վավերացվել է 2020թ. հունվարի 28-ին կազմակերպված ազգային խորհրդակցական աշխատաժողովի ընթացքում, որին մասնակցել են բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերը, ներառյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, գիտակրթական հաստատությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, մասնավոր ընկերություն-ների, գործարար ասոցիացիաների ներկայացուցիչներ: Փաստաթուղթն ընդունվել է այն տարբերակով, որն իր մեջ ներառում էր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված առաջարկու-թյունները՝ գենդերային պատասխանատու մոտեցմամբ:

Մոլդովան նաև իր արդիականացված ԱՍԳ-ի շրջանակում ներկայացրել է հարմար-վողականության մանրամասն բաղադրիչ, որը ներկայացնում է երկրի ռազմավարական տեսլականը կլիմայի փոփոխության հանդեպ հարմարվողականության վերաբերյալ: Բաղադրիչը կառուցված է փաստաթղթում ներկայացված՝ Հարմարվողականության Ազգային Պլանի (ՀԱՊ-1) առաջին փուլի (2014–2017թթ.) իրականացման արդյունքում ձեռք բերված փորձի, ինչպես նաև ներդրման ընթացքում գտնվող ՀԱՊ-2-ի պլանավորման հեռանկարների հիման վրա: Կլիմայական գործողություններին օժանդակելու առումով, հարմարվողականության բաղադրիչը ներառում է միջոլորտային և ոլորտային հատուկ հարմարվողականության գործողություններ և իրականացվելիք միջոցառումներ, ինչպես նաև հարմարվողականության ուղղությամբ ներդրումների գծով բացահայտված առաջնահերթություններ՝ հիմնված ազգային և ոլորտային զարգացման քաղաքականության և պլանների վերանայման և լայնածավալ խորհրդակցությունների գործընթացի արդյունքների վրա, որում ներգրավված են եղել կառավարման բոլոր ոլորտները և մակարդակները ներկայացնող շահագրգիռ կողմերը, մասնավորապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, կլիմայի ոլորտին առնչվող հաստատություններ և գերատեսչություններ, ինչպես նաև մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության, գիտակրթական համայնքի և կանանց ասոցիա-ցիաների և երիտասարդական ՀԿ-ների ներկայացուցիչներ:

4.3.5. Ուկրաինա

ԱՍԳ-ի վերանայման գործընթացը մեկնարկել է 2018թ.-ին՝ Ուկրաինայի Ազգային կառավարության ղեկավարությամբ և ազգային և միջազգային փորձագետների թիմի հետ համագործակցությամբ, որը կազմակերպվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի «Աջակցություն Ուկրաինայի կառավարությանը իր ազգային մակարդակով սահմանված ներդրումը (ԱՍԳ) արդիականացնելու ուղղությամբ» տեխնիկական աջակցությամբ, և որի ֆինանսավորումն իրականացվել է Շվեդիայի կառավարության կողմից:

Հասարակության մասնակցությունը և գործընթացի թափանցիկությունն ապահովելու համար Ուկրաինայի շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների նախարարությանը կից ձևավորվել է ընդգրկուն աշխատանքային խումբ, որը ներառում է բոլոր համապատասխան նախարարությունների, խորհրդարանական հանձնաժողովների, գիտական հաստատությունների, բիզնես ասոցիացիաների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Աշխատանքային խումբը հանդիպել է հինգ անգամ (2019թ. փետրվար, 2019թ. հուլիս, 2020թ. փետրվար, 2020թ. մայիս, 2020թ. նոյեմբեր) գործընթացի յուրաքանչյուր փուլում՝ մուտքային տվյալների, ընտրված մեթոդաբանությունների, նախնական մոդելավորման արդյունքների և վերջնական փաստաթղթերի վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնելու և հավաքագրելու համար: Բոլոր հաշվետվությունները հրապարակվել են նաև նախարարության կայքում՝ հանրային բաց հասանելիությամբ:

ՄԱԶԾ-ի Կլիմայական խոստման և ԱՍԳ-ի նախապատրաստման շրջանակներում իրականացվել է նաև գենդերային վերլուծություն և առաջարկություններ են տրվել կլիմայի փոփոխության մեղմմանն առնչվող ոլորտներում կանանց և տղամարդկանց տարբեր խմբերի կարգավիճակի վերլուծության, կլիմայի քաղաքականության ասպարեզում որոշումների կայացման գործում կանանց հասանելիության վերլուծության, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտներում փոփոխություններն ընդունելու և խթանելու պատրաստակամության վրա գենդերային ազդեցության, գենդերի վրա կլիմայի փոփոխության ազդեցության և Ուկրաինայում գենդերային հավասարության վերլուծության ուղղությամբ:

Մոդելավորված սցենարները վերլուծելու և ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման թիրախներին հասնելու և անհրաժեշտ ներդրումներ ներգրավելու հնարավորությունները քննարկելու նպատակով կազմակերպվել են ավելի քան 20 լրացուցիչ հանդիպումներ ոլորտային հիմնական շահագրգիռ կողմերի հետ:

4.4. ԱՍԳ-ների իրագործում

4.4.1. Հայաստան

Հայաստանն այժմ աշխատում է Ազգային մակարդակով իրագործման ծրագրի վրա՝ ԱՍԳ-ով սահմանված թիրախի իրագործումը ապահովելու համար, որը ներառում է նաև ֆինանսական կարիքների գնահատում: Նախատեսվում է մշակել պարտք/կլիմա հաշվանցման մեխանիզմ, որը թույլ է տալիս ֆինանսներն ուղղել երկրի մակարդակով կլիմայական գործողություններին:

ԱՍԳ-ի նպատակի իրագործմանը աջակցում են արդեն գոյություն ունեցող ազգային ռազմավարություններն ու ծրագրերը, որոնք օժանդակում են էներգետիկ անվտանգությանը, խթանում են կանաչ տնտեսությունը և օգնում են երկարաժամկետ կայուն զարգացման նպատակների իրագործմանը: Նշվածին ավելանում են ոլորտային ռազմավարությունները, որոնք սահմանում են կոնկրետ ոլորտների գծով զարգացման նպատակները: Դրանք են՝

- ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչև 2040թ.)
- Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարական ծրագիր (2014–2025թթ.)
- Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ծրագիր 2021–2030թթ. (մշակման փուլում է)
- Տրանսպորտային ոլորտի ռազմավարություն (մշակման փուլում է)
- Գյուղատնտեսության ռազմավարություն (2020–2030թթ.)
- Կոշտ թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարություն 2017–2036թթ.
- Անտառային տնտեսության ազգային ծրագիր (2021թ.) (մշակման փուլում է):

ԱՍԳ-ի ներդրմանը աջակցություն է ցուցաբերվելու տեղական կառավարման մակարդակով՝ ներգրավելով տեղական համայնքներին և խրախուսելով բոլոր շահագրգիռ կողմերին՝ ներառյալ ՀԿ-ներին, հաշվի առնելով երիտասարդության, խոցելի խմբերի կարիքները՝ գենդերային պատասխանատու եղանակով:

4.4.2. Ադրբեջան

Ադրբեջանում ԱՍԳ-ի իրագործմանն օժանդակում է կայուն զարգացման ազգային ռազմավարությունը («Ադրբեջան 2030. Սոցիալ-տնտեսական զարգացման ազգային առաջնահերթություններ), որը նախանշում է հինգ ազգային առաջնահերթություններ՝ ներառյալ մաքուր շրջակա միջավայրը և կանաչ աճը: Ավելին, կլիմայի փոփոխությանն անդրադարձ է կատարվում նաև ոլորտային ռազմավարական ճանապարհային քարտեզներում՝ 2016-ից 2020-ը, նաև 2025-ից ի վեր՝ երկարաժամկետ թիրախային

տեսլականով: Փաստաթղթի նպատակն է՝ ամրապնդել Ադրբեջանի տնտեսության դիվերսիֆիկացիան և մրցունակությունը, վերացնել նավթային կախվածությունը, ընդլայնել ոչ նավթային ոլորտը և որակյալ արտահանման արտադրությունը, անցումը կանաչ տնտեսության, զբաղվածության մակարդակի և բնակչության բարեկեցության հետագա բարելավումը: ԱՍԳ-ների լիարժեք իրագործման համար անհրաժեշտ է թարմացնել և ընդլայնել գործող ոլորտային ռազմավարությունների գործողությունները և ժամկետները:

Քանի որ էներգետիկան արտանետումների գծով պատասխանատու հիմնական ոլորտն է, Ադրբեջանի Հանրապետությունը նախատեսում է խրախուսական միջոցառումներ իրականացնել այլընտրանքային (վերականգնվող) էներգիայի աղբյուրների օգտագործումն արագացնելու ուղղությամբ, մասնավորապես այլընտրանքային էներգիայի սակագների ճկուն կարգավորման, ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման, գիտատեխնիկական կարողությունների ամրապնդման, մասնագետների շարունակական վերապատրաստման և էներգասպառողների իրազեկվածության մեծացման և գործընթացում մասնավոր հատվածի ներգրավման միջոցով:

4.4.3. Բելառուս

Բելառուսի Հանրապետության կլիմայական քաղաքականությունը կարգավորվում է «Միավորված ազգերի Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիայի Փարիզի շրջանակային համաձայնագրի դրույթների կատարման միջազգային պայմանագրի, իրականացման գործողությունների ծրագրի ընդունման մասին» Նախագահի 2016թ. սեպտեմբերի 20-ի թիվ 345 հրամանագրով: ԱՍԳ-ն ընդունվել է Նախարարների խորհրդի կողմից, այդպիսով երկիրը ստանձնել է հանձնառություն՝ աջակցել միջազգային ջանքերին, և ազգային մակարդակով ներդրում է սահմանվել մինչև 2030թ. ջերմոցային գազերի զուտ արտանետումները 1990թ. համեմատ կրճատել 35%-ով (ոչ պայմանական) և 40%-ով (պայմանական):

Այս նպատակին հասնելու համար մշակվել է անհրաժեշտ գործողությունների ճանապարհային քարտեզ, ներառյալ ծրագրված միջոցառումները հինգ տարի ժամկետով, ինչպես նաև գործողություններ, որոնք կարող են իրականացվել երկարաժամկետ հեռանկարում: Ճանապարհային քարտեզը ներառում է ՋԳ արտանետումների նվազեցման և վերացման «էքսպոնենցիալ ճանապարհային քարտեզի» գրեթե բոլոր առաջարկվող լուծումները, որոնք ներկայումս իրականացվում են կամ կարող են իրականացվել Բելառուսի Հանրապետությունում ապագայում, ներառյալ ԱՍԳ-ով նախատեսվածները: Այս նպատակին հասնելու առավել կիրառելի միջոցառումներից են էներգիայի վերականգնվող աղբյուրների ավելի լայն օգտագործումը, էներգաարդյունավետ բնակարանային շինարարությունը, էլեկտրական տրանսպորտի զարգացումը, ցածր ածխածնային և ածխածնային տեխնոլոգիաների ներդրումը և այլն: Այն բաղկացած է 11 բաժիններից, որոնք պարունակում են

գործողություններ՝ կառուցված ըստ Ազգային մակարդակով սահմանված ներդրման հիմնական բաղադրիչների, ներառյալ կլիմայի քաղաքականության մշակումը, միջազգային համագործակցության ընդլայնումը, տեղեկատվական և կրթական միջոցառումները, գիտական աջակցությունը, մոնիտորինգը, ինչպես նաև թիրախային գործնական միջոցառումները գյուղատնտեսության, անտառային տնտեսության, թափոնների, շինարարության, տրանսպորտի և էներգետիկայի ոլորտների համար: Ճանապարհային քարտեզը նաև սահմանում է հիմնական ցուցանիշներն՝ ըստ ոլորտների, հիմք ընդունելով գլոբալ միտումները և ազգային համատեքստը՝ նպատակի իրագործման ուղղությամբ առաջընթացին հետևելու համար:

4.4.4. Վրաստան

ԱՍԳ-ի իրականացման ճանապարհային քարտեզը սահմանվում է 2030թ. Կլիմայի փոփոխության ռազմավարությամբ և 2021-2023թթ. գործողությունների ծրագրով (CSAP), որը ծառայում է որպես հիմքում ընկած ռազմավարություն և կարճաժամկետ գործողությունների ծրագիր՝ արդիականացված ԱՍԳ-ի իրագործման համար: ԱՍԳ-ն և դրա կատարման փաստաթղթերը հաստատվել են կառավարության կողմից 2021թ. ապրիլին:

CSAP-ը սահմանում է հետևյալ ոլորտային թիրախը, որոնք նույնպես ներառված են ԱՍԳ-ում.

- Տրանսպորտ՝ մինչև 2030թ.15%-ով ցածր հողումային մակարդակից
- Շենքեր. խրախուսել էներգաարդյունավետ տեխնոլոգիաների և ծառայությունների կիրառումը
- Էներգիայի արտադրություն և բաշխում՝ մինչև 2030թ. 15%-ով ցածր հողումային մակարդակից
- Գյուղատնտեսություն. խրախուսել կլիմայական խելացի գյուղատնտեսությունը և ագրոտուրիզմը
- Արդյունաբերություն. 5% կրճատում՝ հողումային սցենարի համեմատությամբ
- Թափոններ. խրախուսել կլիմայական անվտանգ նորարարական տեխնոլոգիաները և ծառայությունները՝ տարանջատման գործելակերպերի և շրջանաձև տնտեսության սկզբունքների արդյունավետ ներդրման միջոցով
- Անտառային տնտեսություն. 2015թ. մակարդակի համեմատ 10%-ով ավելացնել ածխածնի որսման կարողությունը անտառտնտեսության ոլորտում

Վրաստանը նաև մեծապես աջակցում է համայնքային մակարդակով կլիմայի և կայուն էներգիայի հետ կապված գործունեությանը: Այս աշխատանքները համակարգվում են Շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարության և

Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարության կողմից: Քաղաքապետարան-ներին խրախուսվում է անդամակցել քաղաքապետերի դաշնագրին և մշակել Կայուն էներգիայի և կլիմայի վերաբերյալ տեղական գործողությունների ծրագրեր:

4.4.5. Մոլդովա

ԱՍԳ-ի իրականացումը կարգավորվում է մինչև 2030թ. Ցածր արտանետումներով զարգացման ծրագրի և Գործողությունների ծրագրի միջոցով, որը թարմացվել է՝ արտացոլելու արդիականացված ԱՍԳ-ի ավելի բարձր հավակնությունները: Ընդունումը նախատեսվում է 2022թ. կեսերին: Ծրագրի հիմնական նպատակն է՝ ներգրավել և հնարավորություն ընձեռել մասնավոր և պետական հատվածի ներկայացուցիչներին՝ նվազեցնելու տնտեսական գործունեությունից ջերմոցային գազերի արտանետումները՝ համաձայն ԱՍԳ-ով սահմանված թիրախների: Ինչ վերաբերում է ջերմոցային գազերի արտանետումների կրճատման գործընթացին, այս ծրագիրը սահմանում է քանակական թիրախներ՝ համաձայն ԵՄ 2030թ. Կլիմայի և էներգետիկայի քաղաքականության շրջանակի և Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ):

Սույն Ծրագրի իրականացման ժամկետն ընդգրկում է 2021-ից 2030-ը, համակարգումն իրականացնում է Շրջակա միջավայրի նախարարությունը: Վերջինս պատասխանատու է Ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունների մոնիտորինգի, հաշվետվայնության և հավաստման համար: Իրականացման մեջ ներգրավված այլ նախարարություններն են՝ Էկոնոմիկայի նախարարությունը, Ենթակառուցվածքների և տարածաշրջանային զարգացման նախարարությունը, Ֆինանսների նախարարությունը, Գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության նախարարությունը, Կրթության և հետազոտությունների նախարարությունը: Ծրագրի իրականացմանը կմասնակցեն տնտեսվարողները, պետական և տեղական կառավարման մարմինները, քաղաքացիական հասարակությունը, ինչպես նաև շարքային քաղաքացիները:

Ծրագիրը ներկայացնում է արտանետումների յուրաքանչյուր հատվածի ներկա վիճակը, կարևորում է համապատասխան ոլորտային ռազմավարությունները/ծրագրերը, սահմանում ընդհանուր և մասնավոր նպատակները, որոշում է ոլորտային թիրախները 2025 և 2030թթ. համար, սահմանում է առաջընթացի ցուցանիշները, գնահատում է ծախսերը, գնահատում է ռիսկերը և ներառում է իրականացվելիք միջոցառումները:

4.4.6. Ուկրաինա

Ուկրաինան ներկայումս աշխատում է ԱՍԳ-ի իրագործման ճանապարհային քարտեզի մշակման ուղղությամբ, որը հստակեցնում է գործողություններն ըստ ոլորտների, նպատակների, ժամկետների, պարտականությունների, առաջընթացի ցուցանիշների և անհրաժեշտ ֆինանսական միջոցների: Գործընթացը համակարգվում է Շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների նախարարության կողմից և օժանդակություն է ստանում «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի կողմից:

Հետևյալ ռազմավարությունների իրականացումը կարևոր նշանակություն ունի ԱՍԳ-ի թիրախի իրագործման, էներգաարդյունավետության ապահովման և տնտեսական արդիականացման խթանման համար.

- Կլիմայի փոփոխության պետական քաղաքականության իրականացման հայեցակարգ և գործողությունների ծրագիր մինչև 2030թ.
- Ուկրաինայի ցածր արտանետումներով զարգացման ռազմավարություն մինչև 2050թ.
- Ուկրաինայի օրենքը «ՋԳ արտանետումների մոնիտորինգի, հաշվետվայնության և հավաստման հիմունքների մասին» .
- Ուկրաինայի օրենքը «Օզոնը քայքայող նյութերի և ֆտորացված ջերմոցային գազերի մասին».
- Ուկրաինայի էներգետիկ ռազմավարությունը մինչև 2035թ.
- Ուկրաինայի տրանսպորտի ազգային ռազմավարությունը մինչև 2030թ.
- Ուկրաինայի մինչև 2030թ. թափոնների կառավարման ազգային ռազմավարությունը.
- Ազգային տնտեսական ռազմավարությունը մինչև 2030թ.

4.5. Քաղված դասեր և լավագույն փորձի օրինակներ

Հետևյալ ենթագլխում ներկայացնում ենք տեղեկատվություն երկրների արդիականացված ԱՍԳ-ների (2021–2030) պատրաստման գործընթացում նրանց քաղած փորձի վերաբերյալ՝ առանձնահատուկ անդրադառնալով լավագույն փորձի օրինակների և քաղված դասերի վրա:

4.5.1. Հայաստան

Կլիմայի փոփոխության խորհրդի իրավական կարգավիճակի ամրապնդում

Կլիմայի փոփոխության ազգային քաղաքականությունն ու գործողությունները համակարգվում են ՄԱԿ ԿՓՇԿ-ի Պահանջների իրականացման և ապահովման միջգերատեսչական համակարգող խորհրդի կողմից, որը հիմնվել է 2012-ին: Նրանց դերն ամրապնդվել է 2021-ի հուլիսին, երբ նրանց կարգավիճակը վերանայվեց և հաստատվեց Վարչապետի որոշմամբ: Փոխվարչապետի գլխավորությամբ, խորհրդի լիազորությունների շրջանակը ներառում է կլիմայի փոփոխության վերաբերյալ հաշվետվայնության համակարգումը, ՄԱԿ ԿՓՇԿ-ի շրջանակներում Հայաստանի ստանձնած հանձնառությունների իրագործման ուղղությամբ ներդաշնակեցված քաղաքականությունների ապահովումը և 2021-2030թթ. ԱՍԳ-ի, ինչպես նաև ՄԱԿ-ի 2030թ. Կայուն զարգացման օրակարգի 13-րդ նպատակի իրագործման համակարգումը:

Կլիմայական հավակնություններին հասնելու քաղաքականության բազայի ամրապնդում

Զգալի մարտահրավեր է արդիականացված ԱՍԳ-ի վերածումը շոշափելի գործողությունների, որոնք կհանգեցնեն երկարաժամկետ ցածր արտանետումների և կլիմայի նկատմամբ կայուն զարգացման: ԱՍԳ-ի իրագործման պլանի նախաձեռնումը նպատակ ունի առավել արդյունավետ դարձնել իրագործման գործընթացը և համակարգումը և ապահովել թափանցիկությունը: Այն ներկայացնում է բացահայտված առաջնահերթ գործողությունները և գնահատված ռեսուրսների կարիքները: Այս համատեքստում Հայաստանին անհրաժեշտ կլինի կայուն ֆինանսական, կարողությունների զարգացում և տեխնիկական աջակցություն՝ պարբերաբար նախապատրաստելու, իրականացնելու և ներկայացնելու Փարիզի համաձայնագրով նախատեսված ազգային գործողությունները, իսկ ավելի կոնկրետ՝ ՋԳ արտանետումների կրճատման գծով ԱՍԳ թիրախների ուղղությամբ առաջընթացը: Ներկայումս մշակման փուլում են ԱՍԳ-ի ֆինանսական ռազմավարությունը և ներդրումային պլանը, ինչը հնարավորություն կընձեռի օգտագործել ԱՍԳ-ն որպես փոխակերպումային փոփոխությունների մեխանիզմ՝ կլիմայի փոփոխության ուղղությամբ ներդրումների մասշտաբավորման համար: Կլիմայի ուղղությամբ պետական ծախսերի և ինստիտուցիոնալ շրջանակի վերանայումը կարևոր ուղենիշային կետ է այս գործընթացի համար:

Լրացուցիչ ցուցանիշների օգտագործում

Ցածր ածխածնային տնտեսության ուղղությամբ Հայաստանի ձեռքբերումներն արձանագրելու համար օգտագործվել են նոր ցուցանիշներ, ինչպիսիք են ՀՆԱ-ի էներգատարությունը և մեկ միավոր ՀՆԱ-ի հաշվով ջերմոցային գազերի արտանետումները:

4.5.2.Ադրբեջան

Քաղաքական հանձնառություն

Կլիմայի փոփոխության պետական հանձնաժողովը հանդես է գալիս որպես երկրում կլիմայի փոփոխության դեմ պայքարի արդյունավետ ինստիտուցիոնալ գործիք: Այն առաջին անգամ ստեղծվել է 1997թ.-ին, իսկ 2020թ.-ին Հանձնաժողովի կազմին վերաբերող փոփոխությունները հաստատվել են նախագահի հրամանագրով: Հանձնաժողովն այժմ նախագահում է փոխվարչապետը իսկ հանձնաժողովի աշխատանքներին աջակցում է տեխնիկական աշխատանքային խումբը: Աշխատանքային խումբը բաղկացած է համապատասխան պետական մարմինների փորձագետներից՝ ապահովելու համապատասխան շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունը այս գործընթացին, միջգերատեսչական հարաբերությունների ամրապնդումը և աջակցություն ցուցաբերելու Պետական հանձնաժողովի դերին

ՄԱԿԿՓՇԿ-ի շրջանակներում երկրի ստանձնած պարտավորությունների իրականացման ուղղությամբ: Աշխատանքային խմբի հաստատված Գործողությունների ծրագրի ուշադրության կենտրոնում կլինի.1.) ՋԳ գույքագրման և մոնիտորինգի, հաշվետվողականության և հավաստիացման (ՄՀՀ) համակարգերի մշակում, 2) ոլորտների կողմից առաջարկվող ՋԳ արտանետումների նվազեցման միջոցառումների գնահատում. Սա Կլիմայի փոփոխության պետական հանձնաժողովին թույլ կտա ապահովել կլիմայի քաղաքականության իրականացման թափանցիկությունը՝ արդիականացված ԱՍԳ-ով սահմանված արտանետումների թիրախներին հասնելու համար:

4.5.3. Բելառուս

Կլիմայական հավակնություններին հասնելու քաղաքականության բազայի ամրապնդում

Բելառուսի Հանրապետությունը, հանդիսանալով անցումային փուլում գտնվող երկիր, Հավելված I-ի անդամ է, որտեղ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն զիջում է Հավելված I-ի մյուս անդամ երկրների մեծամասնությանը: Բելառուսն սահմանափակ կարողություններ ունի ֆինանսական ռեսուրսների մոբիլիզացման և ցածր ածխածնային տեխնոլոգիաներում և նորարարություններում լրացուցիչ ներդրումների ապահովման առումով, որոնք անհրաժեշտ են ավելի հավակնոտ ԱՍԳ-ի իրագործման համար: Այսպիսով, Ֆինանսական ռազմավարությունը խիստ անհրաժեշտ է՝ ֆինանսական մեխանիզմների և միջազգային ֆինանսական աջակցության միջոցով ԱՍԳ թիրախի իրագործման հնարավոր լուծումների և ներդրումային պլանի հնարավոր ուղիների հստակեցման տեսանկյունից:

Արդիականացված ԱՍԳ-ի վերափոխումը շոշափելի գործողությունների, որոնք կհանգեցնեն երկարաժամկետ ցածր արտանետումների և կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայուն զարգացմանը, բավականին զգալի մարտահրավեր է: Դրան հասնելու համար Բելառուսին անհրաժեշտ է կայուն ֆինանսական, տեխնիկական աջակցություն և կարողությունների զարգացում՝ աջակցելու ազգային գործողությունների նախապատրաստմանը, իրականացմանը և հաշվետվողականությանը ՓՀ-ի շրջանակներում, իսկ ավելի կոնկրետ՝ ԱՍԳ թիրախների համեմատ:

Կարողությունների հզորացում և յուրաքանչյուր նախարարության, պետական մարմնի ներգրավում ՓՀ-ի իրագործման ուղղությամբ իրականացվող համատեղ գործողություններին

Դեռևս անհրաժեշտություն կա.

- տարեկան պարբերականությամբ պատրաստել ջերմոցային գազերի կադաստր և շարունակական հիմունքով կատարելագործել այն՝ ըստ ԿՓՓՄԽ վերջին ուղեցույցների
- ստեղծել կլիմայի փոփոխության բարձր մակարդակի կոմիտե՝ գործողություններն ու ծրագրերը ներդաշնակեցնելու և համակարգելու նպատակով
- մշակել մոնիտորինգի համակարգ՝ վերլուծելու ԱՍԳ-ի իրագործման ուղղությամբ արձանագրված առաջընթացը
- իրականացնել կլիմայական ռիսկերի և ոլորտների խոցելիության գնահատում՝ հաջորդ ԱՍԳ-ում ներառելով հարմարվողականությանը վերաբերող գլուխ
- քաղաքականության և միջոցառումների շարքում ինտեգրել կլիմայի պաշտպանության և ջերմոցային գազերի զուտ արտանետումների նվազեցման թիրախները

4.5.4. Վրաստան

Վրաստանը ԱՍԳ-ի նախապատրաստման ընթացքում որպես լավագույն փորձ մատնանշեց երկու գործողություն և կշարունակի դրանք կիրառել ապագայում:

Խոցելի խմբերի ինտեգրում ԱՍԳ-ի նախապատրաստմանը

Վրաստանի արդիականացված ԱՍԳ-ի 12-րդ կետը սահմանում է երկրի խոցելի խմբերը: Հիմնական շահագրգիռ կողմերի, հատկապես խոցելի խմբերի առանձնահատուկ շահերը, կարիքները, կարողությունները, դերերն ու պարտականությունները հաշվի առնելու նպատակով փաստաթղթի արդիականացման գործընթացում հանդիպումներ են անցկացվել կլիմայի փոփոխության և գենդերային հիմնախնդիրներով աշխատող խոցելի խմբերի և քաղաքացիական կազմակերպությունների հետ:

Կլիմայի փոփոխության խորհրդի ստեղծում

Վրաստանի կառավարությունը կառավարական մակարդակում ստեղծել է խորհրդակցական մարմին՝ Կլիմայի փոփոխության խորհուրդը, որը պետք է իրականացնի և հետամուտ լինի արդիականացված ազգային մակարդակով սահմանված ներդրման իրագործմանը: Խորհուրդն իրենից ներկայացնում է գործիք՝ կլիմայի քաղաքականության իրականացման թափանցիկության ապահովման համար՝ սույն փաստաթղթով սահմանված արտանետումների թիրախներին հասնելու նպատակով:

4.5.5. Մոլդովա

Մոլդովայի դեպքում, արդիականացված ԱՍԳ-ի մշակման և առաջխաղացման ժամանակ կարևոր օժանդակող դեր է ունեցել սկզբնական ԱՍԳ-ի պատրաստման և հաստատման ընթացքում ձեռք բերված փորձը:

ԱՍԳ2-ի ոչ պայմանական թիրախը նախատեսվում է իրագործել արդյունավետ խթանների օգտագործման և պետական ներդրումների՝ դեպի առավել ցածր արտանետումային գործողությունների ուղղորդման միջոցով: Ինչ վերաբերում է ԱՍԳ2 պայմանական թիրախին, ֆինանսական աջակցություն է նախատեսվում ստանալ համապատասխան դոնորներից, հիմնականում Կանաչ Կլիմայի հիմնադրամից (ԿԿՀ). ներկայումս ԿԿՀ-ի հետ համագործակցության Մոլդովայի Հանրապետության 2020-2024թթ.Երկրի ծրագիրը քննարկվում է հաստատման համար. իրականացվում է երկրի կարողությունների, ֆինանսական և տեխնոլոգիական կարիքների համապարփակ գնահատում՝ կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության միջոցառումների պլան-ժամանակացույցի իրագործման նպատակով:

Հաշվի առնելով կլիմայի ուղղությամբ ներդրումներում մասնավոր հատվածի ներգրավման ուղղությամբ առկա բացերն ու խոչընդոտները, պետք է մշակվի միջոցառումների շարք՝ Մոլդովայի մասնավոր հատվածի կարողությունների զարգացման և տեխնիկական աջակցության տրամադրման համար:

4.5.6. Ուկրաինա

Անհրաժեշտ է նշել երկրի տնտեսության համակարգի մանրամասն մոդելավորման դրական փորձը: Մոդելավորմամբ ընդգրկված են բոլոր տնտեսական ոլորտները և հնարավորություն է ընձեռվել վերլուծել տնտեսական զարգացման տարբեր սցենարներ, կլիմայի և էներգետիկայի առկա ծրագրերի և ռազմավարությունների ազդեցությունը, ինչպես նաև լրացուցիչ անհրաժեշտ քաղաքականություններն ու միջոցառումները:

ԱՍԳ-ի պատրաստման գործընթացը բնութագրվում է ներառականությամբ և քննարկման և մեկնաբանությունների համար բաց մոտեցմամբ, բոլոր փուլերում շահագրգիռ կողմերի և հանրության ներգրավմամբ:

Կենտրոնական գործադիր մարմինները նույնպես ներգրավված են եղել աշխատանքային խմբում ԱՍԳ-ի պատրաստման գործընթացի բոլոր փուլերում, ինչը դրականորեն է ազդել փաստաթղթի հետագա բանակցությունների վրա:

5. Հավելվածներ

Բացի այդ, Հավելվածների ներքո Ծրագիրը նաև կներկայացնի չորս գործընկեր երկրների գործնական դեպքերի ուսումնասիրություններ[2], որտեղ անդրադարձ է արվել նրանց կլիմայական գործողություններին օժանդակող որոշ հիմնախնդիրների. Հայաստանում շեշտադրվել է կլիմայի փոփոխության ուղղությամբ պետական ծախսերի վերանայման անհրաժեշտությունը, Վրաստանում անցկացվել է հասնրային հարցում կլիմայի փոփոխության վերաբերյալ, մինչդեռ Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի ուսումնասիրություններում ուշադրության կենտրոնում են եղել, համապատասխանաբար, թափոնների և տրանսպորտի ոլորտներում կլիմայական գործողությունների ներառման հնարավորությունները: Բոլոր ուսումնասիրությունների արդյունքում ներկայացվել են բարելավման առաջարկություններ և առաջարկվել են հետագա քայլեր՝ ուղղված երկրների արդիականացված ԱՍԳ-ների իրագործմանը:

5.1. Հայաստանի գործնական ուսումնասիրություն. կլիմայական քաղաքականության և ծախսերի վերանայում

Հայաստանում կլիմայի փոփոխության հիմնախնդիրներին անդրադարձ է արվում մեղմման, ինչպես նաև հարմարվողականության ուղղությամբ տարբեր կլիմայական քաղաքականությունների միջոցով, որոնց համար պահանջում են զգալի պետական ծախսեր, սակայն որոնց մասշտաբները մինչ այժմ չեն մշտադիտարկվել: 2020թ. Հայաստանը վերանայել է պետական ծախսերը, քաղաքականության շրջանակը և ինստիտուցիոնալ կառուցվածքը: Վերանայման նպատակն էր՝ բարելավել ծախսերի կառավարման գործընթացները, քաղաքականության ընդգրկման շրջանակը, քաղաքականության իրականացման և հետագա պլանավորման աշխատանքները: Այս նպատակով օգտագործվել է «Կլիմայի քաղաքականության և ծախսերի վերանայման» (CPEIR) գործիքը, իսկ վերանայումն իրականացվել է «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի գործողությունների շրջանակներում:

Վերանայման արդյունքները ցույց տվեցին, որ Հայաստանն ունի լավ զարգացած պետական ֆինանսների բյուջետավորման համակարգեր, սակայն, միջոլորտային, մասնավորապես, կլիմայի փոփոխության քաղաքականության գծով ծախսերի, բյուջետավորման և հաշվետվայնության սահմանման համար կպահանջվի բյուջետավորման գործընթացում նոր ինստիտուցիոնալ մեխանիզմների մշակում, կլիմայի բյուջեի պիտակավորման գործիքների կիրառում ինչպես նաև միջգերատեսչական համակարգման բարելավում:

[2] Թարգմանվեց միայն ՀՀ վերաբերող հավելվածը:

Կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ուղղությամբ ծախսերի բացահայտման և կառավարման խնդիրներից զատ, կարևոր է նաև բացահայտել կլիմայի վրա վնասակար ազդեցություն ունեցող ծախսերը, ինչպիսիք են հանածո վառելիքի սուբսիդիաները: Այս ծախսերի վերլուծությունը չի ներառվել ուսումնասիրության շրջանակներում:

Ավելի մանրամասն, գնահատման ընթացքում անդրադարձ է կատարվել հետևյալ հիմնական հարցերին:

1. **Ինչպե՞ս է կլիմայի փոփոխության քաղաքականությունը վերածվում ծրագրերի և նպատակների:**

   Այս հարցին պատասխանելու համար իրականացվել է քաղաքականության շրջանակի, ներառյալ իրավական ակտերի, ազգային ռազմավարությունների և ծրագրերի, միջնաժամկետ ծախսերի շրջանակների և միջազգային համաձայնագրերի վերանայում: Արդյունքում պարզ է դարձել, որ Հայաստանը չունի կլիմայի փոփոխությանը վերաբերող կոնկրետ համապարփակ ռազմավարական փաստաթուղթ. թեման այս կամ այն կերպ ներկայացված է պետական տարբեր գերատեսչությունների կողմից ոլորտային զարգացման ռազմավարություններում և ծրագրերում: Հայաստանը 2020թ. նախաձեռնել է «Փոխակերպման ռազմավարություն 2050»-ի մշակումը, որը սահմանում է զարգացման 16 երկարաժամկետ նպատակներ, որոնց մի մասը սերտորեն առնչվում է կլիմայի փոփոխությանը: Այնուամենայնիվ, ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարություն դեռևս մշակված չէ: Ոլորտային քաղաքականության իրականացումն ապահովելու նպատակով առաջարկվել է ներդնել մոնիտորինգի պահանջներ, ինչպես օրինակ, կլիմայի հետ կապված ցուցանիշներ:

2. **Որքանո՞վ են երկրի հաստատությունները արդյունավետ ձևակերպում և իրագործում կլիմայական փոփոխություններին արձագանքման գործողությունները:**

   2012թ. Հայաստանում ձևավորվել է «Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի պահանջների և դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհուրդը»: Խորհուրդը նախագահում է Շրջակա միջավայրի նախարարը. այն բաղկացած է 14 նախարարությունների, պետական վիճակագրական կոմիտեի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցիչներից: Խորհրդին

տեխնիկական աջակցություն և խորհրդատվություն է տրամադրվում փորձագետների լայն շրջանակ ներառող աշխատանքային խմբի կողմից: Անտառային և ջրային տնտեսության հարցերը համակարգվում են երկու ոլորտային հանձնաժողովների կողմից:

Շրջակա միջավայրի նախարարությունը կլիմայի փոփոխության քաղաքականության՝ ազգային մակարդակով մշակման և իրականացման գծով լիազորված ազգային մարմինն է: Այդ նպատակով, նախարարության կառուցվածքում ստեղծվել է կլիմայական քաղաքականության վարչություն, որը պատասխանատու է պլանավորման աշխատանքների համար: Մեկ այլ ստորաբաժանում՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման բաժինը», համակարգում է բնապահպանական ծրագրերի իրականացումը՝ կատարում է ծրագրերին հատկացված պետական բյուջեի միջոցների բաշխումը, ինչպես նաև միջազգային ֆինանսավորման (օրինակ, Կանաչ Կլիմայի հիմնադրամ) համար հանդես է գալիս որպես իրականացնող մարմին:

Հայաստանում քաղաքացիական հասարակության ներգրավումը իրականացվում է հանրային խորհրդի միջոցով: Սա անկախ խորհրդակցական մարմին է, որը ներառում է ավելի քան 20 քաղաքացիական հասարակության կազմակերպություններ (ՔՀԿ):

Վերանայումը ցույց տվեց, որ չնայած համապատասխան հաստատությունների և միջգերատեսչական մարմնի ձևավորմանը, այնուամենայնիվ, ընթացիկ կարգավիճակը և լիազորությունների շրջանակը բավականաչափ համակարգված չեն կլիմայի փոփոխության հետ կապված բոլոր խնդիրները արդյունավետ լուծելու համար:[3] Հատկապես, այլ նախարարությունների կլիմային առնչվող ծրագրերում ներգրավվելու առումով Շրջակա միջավայրի նախարարության լիազորության բացակայությունը հանդիսանում է առաջընթացը սահմանափակող գործոն: Բացի այդ, վերանայման արդյունքներով առաջարկվել է ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք թույլ կտան մեծացնել քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը և իրազեկվածությունը:

3. Բյուջեից որքա՞ն միջոցներ են հատկացվում կլիմայի փոփոխության դեմ պայքարին:

Այս դիտարկման համար հիմք է հանդիսացել 2017-2019թթ. պետական բյուջեն: Կլիմայի հետ կապված ծախսերը սահմանելու համար ծախսերը դասակարգվել ըստ են վեց տարբեր մեղմման ոլորտների (օրինակ՝ տրանսպորտ) և/կամ յոթ տարբեր

[3] Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021թ. հուլիսի 6-ի N 719-Ա որոշման համաձայն, խորհուրդն այժմ նախագահում է փոխվարչապետը:

հարմարվողականության ոլորտների (օրինակ՝ զբոսաշրջություն) և որոշվել է դրանց կշիռն՝ ըստ արդիականության: Կշռութային մեծությունները որոշելու համար հիմք են ընդունվել ծախսի ուղղությունը/նպատակը և ջերմոցային գազերի արտանետումների կամ կլիմայի հանդեպ դիմակայունության վրա դրանց ազդեցությունը:

Ծախսերի դիտարկման արդյունքներով բացահայտվել է, որ 2017-ից 2019-ը, միջին հաշվով, Հայաստանի բյուջեի շուրջ 3.2% -ը ծախսվել է կլիմային առնչվող գործողությունների վրա, չնայած կլիմայական ուղղվածությամբ ծախսերի և՛ բացարձակ, և՛ հարաբերական մեծությունների անկում է գրանցվել դիտարկված երեք տարիների ընթացքում (Տես Գծապատկեր 1): Դիտարկելով առանձին տարիները՝ նշվում է, որ երեք տարվա ընթացքում կլիմայական ծախսերը նվազել են ավելի քան 40%-ով: Այս միտումը կիրառելի է նաև ՀՆԱ-ում կլիմայական ծախսերի մասնաբաժնի դեպքում, որն ավելի քան երկու անգամ կրճատվել է:

Գծապատկեր 1. Կլիմայական ծախսերը 2017–2019 թթ. ընթացքում



Այնուամենայնիվ, կարևոր է շեշտել, որ կլիմայական ուղղվածությամբ ծախսերի անկումը շատ ավելի ակնհայտ է արտաքին, քան ներքին ֆինանսավորմամբ իրականացվող ծախսերի շրջանակում: Արտաքին ֆինանսավորմամբ կլիմայական ծախսերի մասնաբաժինը կլիմայական ընդհանուր ծախսերում 2017թ. 57,2%-ից նվազել է մինչև 45,2%՝ 2019թ.-ին: Սա հիմնականում պայմանավորված է արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող այս ծախսերի բյուջեի կատարողականի նվազմամբ, որի արդյունքում նման նախագծերն ու ծրագրերն իրականացման ընթացքում ավելի ու ավելի հաճախ են ենթարկվում նախնական հաստատված բյուջեի էական վերանայումների: Ինչ վերաբերում է ներքին աղբյուրներից ֆինանսավորվող կլիմայական ծախսերին, թեև վերջիններս տարեցտարի

բացարձակ թվով նվազել են, նրա մասնաբաժինը կլիմայական ընդհանուր ծախսերում աճել է՝ 2017-ի 42.8%-ից հասնելով 2019-ի 54.8%-ի (տե՛ս Գծապատկեր 2): 2017-2019թթ. կլիմայական միջոցառումների ընդհանուր ֆինանսական կատարողականը[4] ցածր է եղել պետական բյուջեի այդ տարիների ընդհանուր կատարողական մակարդակի համեմատ: Օրինակ՝ 2019թ. կլիմայական միջոցառումների գծով կատարողականը կազմել է ընդամենը 60%՝ պետական բյուջեի ընդհանուր կատարողականի գրեթե 99%-ի համեմատ:

Գծապատկեր 2. Կլիմայական ծախսերի ֆինանսավորման աղբյուրները 2017-2019թթ.



Կլիմայի փոփոխությանն առնչվող բյուջետային ծրագրերի թիվը 2019թ. 137-ից հասել է 182-ի, ընդ որում քաղաքականության միջոցառումների ավելի քան 65%-ն ունեն բարձր արդիականություն: Սակայն միայն 6,6%-ի դեպքում է որպես առաջնային նպատակ սահմանված կլիմայի փոփոխության մեղմման կամ հարմարվողականության խնդիրների լուծումը: Հարմարվողականության ուղղությամբ բյուջեի ծախսերը զգալիորեն ավելի բարձր են, քան մեղմման ուղղությամբ, բոլոր տարիների համար (տես Գծապատկեր 3): Տրանսպորտի ոլորտում արտանետումների նվազեցման ծրագրերի ուղղությամբ կատարվող ծախսերն ամենաբարձրն են (52%): Հարմարվողականության ոլորտում ծախսերի մեծ մասն ուղղորդվում է մարդկային բնակավայրերի, ենթակառուցվածքների և էներգիայի (34%) և ջրային ռեսուրսների (28%) ուղղությամբ:

[4] Հաշվարկված է որպես կլիմայի փոփոխությանն առնչվող միջոցառումների գծով ընդհանուր փաստացի ծախսերի հարաբերակցություն ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատված սկզբնական բյուջեով այդ միջոցառումների գծով կատարված ընդհանուր փաստացի ծախսերի նկատմամբ:

Գծապատկեր 3. Կլիմայական ծախսերն ըստ կլիմայի փոփոխության արձագանքի ուղղվածության



Որպես եզրակացություն՝ կլիմայական գործողությունների ֆինանսավորումն ունի համեմատաբար ցածր առաջնահերթություն, քանի որ 2017 և 2019թթ. ծախսերը նվազել են: Սակայն Հայաստանն ավելացրել է կլիմայի փոփոխությանն ուղղված ծրագրերի թիվը, թեև այդ ծրագրերի միայն փոքր մասն է կլիմայի փոփոխությունը սահմանում որպես իրենց առաջնային նպատակ:

4. Ինչպե՞ս կարող է բարելավվել գոյություն ունեցող ֆինանսավորման մեխանիզմը՝ կլիմայի փոփոխությունն ավելի լավ ինտեգրելու համար:

Ամեն տարի Ֆինանսների նախարարության առաջնորդությամբ իրականացվում է բյուջետավորման գործընթացը, որով նախատեսվում է միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) և գալիք տարվա բյուջեի նախագիծը: Յուրաքանչյուր նախարարություն և պետական այլ գերատեսչություններ ներկայացնում են իրենց բյուջետային հատկացումները՝ հիմնվելով իրենց ոլորտային իրականացման ծրագրերի վրա, որոնք կարող են ներառել կլիմայական բնույթի միջոցառումներ: Բյուջեի փաստաթղթերը որևէ կերպ չեն բացահայտում կլիմայի հետ կապված ծախսերի մասին տեղեկատվություն: Կլիմայի հետ կապված բոլոր բյուջետային ծախսերը տարրալուծված են ոլորտային զարգացման նպատակների շուրջ մշակված և պետական տարբեր գերատեսչությունների կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի/միջոցառումների շրջանակներում: Թեև Շրջակա միջավայրի նախարարությունը պետական մարմինն է, որը պատասխանատու է կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտում պետական քաղաքականության մշակման համար, սակայն չկա տարբեր պետական մարմինների միջև կլիմայական ծրագրերի և ծախսերի համակարգման հստակ մեխանիզմ:

Հայաստանն ունի ՀԾՖ բյուջետավորման լավ զարգացած համակարգեր: Այնուամենայնիվ, միջոլորտային, մասնավորապես, կլիմայի փոփոխության քաղաքականության գծով ծախսերի, բյուջետավորման և հաշվետվայնության սահմանման համար կպահանջվի բյուջետավորման գործընթացում նոր ինստիտուցիոնալ մեխանիզմների մշակում:

Ներկա իրավիճակը կարող է բարելավվել՝ միջոլորտային քաղաքականության համար պետական մարմինների միջև համակարգման մեխանիզմների ստեղծմամբ: Սա ներառում է մեթոդոլոգիաների և ուղեցույցների մշակում կլիմայական ուղղվածություն ունեցող միջոցառումների («կլիմայական բյուջեի պիտակավորում»), ծախսերի և ակնկալվող ազդեցությունների հաշվարկման համար, ինչպես նաև կատարողական ցուցանիշների ներդրում՝ ազդեցությունը գնահատելու համար: [5] Նման տեղեկատվությունը նաև կօգնի ապահովել կլիմայական ուղղվածություն ունեցող ծախսերի թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

[5] ՀՀ վարչապետի 2021թ. մայիսի 04-ի N 472-Լ որոշման համաձայն, պետական ներդրումային նախագծի մշակման և գնահատման ձևանմուշը ներառում է տեղեկանք կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գծով ծրագրի հնարավոր օգուտի վերաբերյալ:

www.eurasia.undp.org

@undpeurasia

Բոլոր իրավունքները պաշտպանված են

© 2021 ՄԱԶԾ